



ԱՐԱՐԱՏ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Յ) - 94
Ա 840

Ա 840 **Արարատ: Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ձեռքբերումները 2007-2011 թվականներին /** Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն. Եր.: Տնտես. բարեփոխումների վերլուծ. - տեղեկատվական կենտրոն, 2012. - 68 էջ:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արարատի մարզում առավել նկատելի ձեռքբերումները՝ տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերը, որոնց շնորհիվ մարզի տնտեսությունն ու հասարակությունը նշանակալի ձեռքբերումներ են ունեցել:

ՀՏԴ 330.12 (479.25)
ԳՄԴ 65.9 (2Յ) - 94

ISBN 978-9939-9065-4-6

© Տնտեսական բարեփոխումների վերլուծական - տեղեկատվական կենտրոն, 2012

Կազմին՝ Փանոս Թերլեմեզյան, Մասիս աշևանը (1922)



Տպագրված է «ՄԱՍԻՍ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Արարատ

Աշխարհում ամեն պահ ինչ-որ տեղ անձրևում է: Եվ անձրևի պահին ու անձրևից հետո արևի լույսի խաղով ծիածանվում է երկինքը ինչ-որ մեկի արտի վրա, ու ինչ-որ մեկի երեխան հրճվում է՝ առաջին անգամ տեսնելով բնության հրաշքը: Հրճվում է անհոգ ու դեռ անտեղյակ, որ երկրագնդի վրա կա մի տեղ, ուր երկնքի արցունքոտ ժպիտը հեռավոր մի օր նշանավորել է մարդու ու նրա սերունդների հարատևությունը: Եվ օրերից մի օր, արդեն պատանի, գուցե իմանա, որ մեծ աշխարհի փոքրիկ անկյունում ծվարել է մի դաշտավայր, ուր արարիչը, ըստ ավանդության, ուխտ կապեց մարդու հետ ու խոստացավ նրան մշտնջենական ցանքս ու բերքահավաք, ցուրտ ու տաք, ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, ուր արարիչը օրհնեց մարդուն ու նրա որդիներին և ծիածանեց երկինքը՝ որպես հավերժ հիշեցում իր խոստումի:

Միլիոնավոր պատանիների համար Արարատ երկիրը թերևս կմնա որպես բիբլիական ավանդություն միայն: Սակայն հարյուր հազարների համար, Արարատի ու Գեղամա լեռների միջև, Արաքսի ու Ազատի հովտում

փռված բիբլիական հողը, որ վկա դարձավ արարչի ու մարդու միջև ուխտին ու տեսավ առաջին ծիածանը, տուն է ու համայնք, տքնության արտ է ու գինու հնձան, խաղողի տնկարկ է ու ծիրանի այգի, դպրոց է զավակների համար ու աշխատավայր, ծնողական գիրկ է ու պապերի հանգրվան...

Մերօրյա Արարատն այսօր էլ յուրօրինակ Նոյան Տապան է՝ հայ գեղի ու հայ մշակույթի թանգարան. Արարատյան դաշտի այս անկյունը հազարամյակներ շարունակ ընդունել, պատսպարել ու սնել է հայի սերունդներին՝ պատմական Հայաստանի ու Հայկական Լեռնաշխարհի գրեթե բոլոր անկյուններից ու շեներից: Հաճախ մի բնակավայրից մյուսն ընդամենը երեք կիլոմետր անցնելով, մշակութային հազարավոր կիլոմետրեր են կտրում. այն շեները որտեղից Արարատ են հասել հարևան համայնքների բնակիչների նախնիները, երբեմն իրարից հեռու են եղել երկուսուկես հազար կիլոմետր: Երկու հազար քառակուսի կիլոմետրի վրա կողք-կողքի փռված են հայոց շեները, ասես Հայոց Աշխարհի քարտեզի՝ պատմության հողմերից քշված պատառիկներ. Մակու ու Սպահան, Խոյ ու Սալմաստ, Վան ու Շատախ, Սարիղամիշ, Մուշ, Էրզրում, Արղահան ու Ղարաղաղ, Սուրմալու, Նուխ ու Բիթլիս, Խարբերդ, Ուրմիա, Մոքս ու Մամրտան, Խանիշան, Թիմար ու Գավաշ, Կարճկան, Հակուկ ու Հաղպակ... և Նախիջևան, Բաբու, Սուլգայիթ ու Մինգեչաուր, և Սիրիա ու Լիբանան...

Այն հողը, ուր հայը հիմնեց իր առաջին թատրոնն ու երկրպագեց մարդասեր աստվածների ոսկեծույլ բազիններին, ուր հավատաց փրկություն բարոզող առաքյալներին, ուր ստեղծեց առաջին խաչքարը, ուր հարյուրավոր զանգերի դողանշով լեզու առան հայի եկեղեցիները, ամեն անգամ

գրկաբաց ընդունել է իր զավակներին: Եվ զավակները շնորհակալ եղան Արարատի բարեբեր հողին, հերկեցին ու հասցրին բերբեր, հիմնեցին դպրոցներ ու ցրեցին ճակատագրի խավարը:


Պարարտ է Արարատի հողը, թերևս ամենաբերքատուն՝ հազար կիլոմետր շառավղով, սակայն հեշտ չի պարզևում իր բարիքները: Խորշակ ու կարկուտ, հեղեղ ու սողանք. կամակոր է ու բմահաճ բնությունն Արարատի մարզում: Տարվա ընթացքում Արարատի մարզում ջերմաստիճանը միջինում տատանվում է ավելի շատ, քան տարածաշրջանի որևէ այլ վայրում՝ բառասուն աստիճան ցրտից մինչև հիսուն աստիճան մուլեզևոդ տապը:

Մեծ աշխատանք ու նվիրում է պահանջում Արարատի հողն իրենից բերք հավակնողից: Սակայն իր հմուտ ու համառ մշակին Արարատի հողը պարզևատրում է առատածեռն: Պարզևատրում է ամառ, թե ձմեռ: Ամռանն ու աշնանը բերք են տալիս Արարատի արտերը, այգիներն ու տնկարկները: Ձմռանն ու գարնանը տաղանդներ ու հանճարներ է ծնում Արարատի հողը. ծնում է պոետ ու սպարապետ, պետական գործիչ, գիտնական ու մարզիկ: Ծնում է մարդիկ, ովքեր հայոց համար ճակատագրական պահերին գերմարդկային պոռթկումով միավորել են պառակտվածը, քաշել ու հրել, տարել շալակած, ծով քրտինք թափել ու չեն խնայել ո՛չ արյուն, ո՛չ կյանք արարատյան հողի վրա արարատցու իրավունքով ապրելու համար: Եվ իր վրա հաստատուն հային ու նրա սերունդներին Արարատի հողն անմնացորդ ու հարյուրապատիկ վերադարձրել ու վերադարձնում է թափած քրտինքն ու արյունը:


Մարդը

Արարատի մարզի բնակչությունը 2002 թվականից ի վեր **տարեց-տարի աճել է**, փոխարինելով նախորդող ժամանակաշրջանի նվազմանը: Արարատը Հայաստանում 280 հազարից ավելի բնակչություն ունեցող հինգ մարզերից մեկն է:

Բնակչության թվաքանակի փոփոխությունը Արարատի մարզում (հազար մարդ)



Ծնվածների թվաքանակը Արարատի մարզում (մարդ)




2011 թվականին Արարատի մարզում ծնվել է 1,080 երեխա ավելի, քան 2001 թվականին՝ **40 տոկոսով ավելի**:

2010 թվականին Արարատի մարզում բնակչության բնական աճը 2002 թվա-

կանի համեմատ **ավելացել է շուրջ 85 տոկոսով**: Հազար բնակչի հաշվով Արարատի մարզում բնական աճը հանրապետության միջինից բարձր է ավելի քան 15 տոկոսով:


2010 թվականին Արարատի մարզում բնական աճը հազար բնակչի հաշվով 2001 թվականի համեմատ կրկնապատկվել է:

Բնական աճը 1000 բնակչի հաշվով, 2010թ.



Մանկական մահացությունն Արարատի մարզում **ավելի ցածր է**, քան միջինը հանրապետությունում: 2009 թվականից սկսած՝ մանկական մահացությունը

Մինչև 1 տարեկան մահացածների թվաքանակը 1000 կենդանածնի հաշվով Արարատի մարզում



Արարատի մարզում կրճատվել է մարզում աղբատության հաղթահարման լավագույն վկայություններից մեկը:

2011 թվականին հազար բնակչի հաշվով մահացածների թիվն Արարատի մարզում **ավելի ցածր է**, քան մայրաքաղաք Երևանում, ավելի ցածր՝ քան միջինը հանրապետությունում: Մահացության ցուցանիշն Արարատի մարզում **հանրապետության ամենացածրերից մեկն է**. հիմնականում գյուղական բնակչություն ունեցող Արարատի մարզում մահացությունն ավելի ցածր է, քան հանրապետության քաղաքային բնակավայրերի միջին ցուցանիշը:


Արարատի մարզում տարեց-տարի ավելացել է ամուսնությունների քանակը:

2011 թվականին Արարատի մարզում գրանցվել է շուրջ 1750 ամուսնություն՝ **ավելի, քան երբևէ անկախ Հայաստանի պատմության մեջ**: 2011 թվականին արարատցիները **երկու անգամ ավելի մեծ** թվով ընտանիքներ են կազմել, քան տասը տարի առաջ՝ 2001 թվականին: Ընդ որում, նույն ժամանակահատվածում հանրապետությունում ամուսնությունների թիվն աճել է ընդամենը 60 տոկոսով:

Հայաստանում ամուսնությունների թիվը ամենաբարձր տեմպերով ավելացել է Արարատի մարզում:

2009-2011 թվականների ընթացքում ամուսնությունների թիվն Արարատի մարզում ավելացել է շուրջ մեկ քառորդով, մինչդեռ նույն ժամանակահատվածում

Ամուսնությունների թիվը ՀՀ մարզերում, 2011թ.



ամուսնությունների թիվը հանրապետությունում ավելացել է շուրջ 5 տոկոսով՝ հինգ անգամ դանդաղ, քան Արարատում:


Արարատի մարզը **հանրապետությունում լավագույնն է** թե՛ ամուսնությունների աճի տեմպով, թե՛ ամուսնալուծությունների թվի նվազման միտումով: Այսպես, եթե 2011 թվականին 2005 թվականի համեմատ հանրապետության գրեթե բոլոր մարզերում, բացառությամբ Վայոց Ձորի մարզը, ամուսնալուծությունների թիվն աճել է, ընդ որում, Երևանում՝ ավելի քան 20 տոկոսով, իսկ հանրապետությունում՝ միջինում շուրջ 30 տոկոսով, ապա Նույն ժամանակահատվածում Արարատի մարզում **ամուսնալուծությունների թիվը նվազել է** երեք տոկոսով:

2010 թվականին հանրապետության մարզեր եկող միգրանտների թիվն ամենաբարձրն էր Արարատի մարզում:

Հայաստանի մարզեր եկող միգրանտների շուրջ մեկ հինգերորդը 2010 թվականին եկել է Արարատի մարզ: Արարատ եկող միգրանտների թիվն ավելին է, քան հանրապետության չորս մարզերում միասին: 2010 թվականին Արարատի մարզ եկել է գրեթե նույնքան մարդ, որքան Երևան: 2010 թվականին Արարատ եկողների թիվը 2002 թվականի համեմատ ավելացել է 60 տոկոսով:

2010 թվականին Արարատի մարզից մեկնողների թիվը **ամենացածրն է** ան-

Միգրացիա, մեկնողների և եկողների թվաքանակը Արարատի մարզում (մարդ)





Հայաստանի, ինչպես նաև Կովկասի ամենաբարձրահասակ հայն ապրում է Արարատի մարզի Ջրաշեն գյուղում: Արշավիր Գրիգորյանը քսաներեք տարեկան է, ունի 2,3 մ հասակ և 125 կգ քաշ: Հագնում է 55 համարի կոշիկ: Պատվեր է տալիս: Այդ չափսի կոշիկ չեն արտադրում լայն սպառման համար: Իսկ հագուստ ընտրում է ամենամեծ չափսը՝ XXXXXL, այն էլ՝ փոքր է գալիս: Արշավիրի ընտանիքում բոլորն են բարձրահասակ, սակայն ոչ այնքան, որքան ինքն է: Եղբայրը, որ այժմ ծառայում է հայկական բանակում, ունի 1,8 մ հասակ:

կախի Հայաստանի Հանրապետության պատմության ընթացքում: 2010 թվականին Արարատից մեկնողների թվաքանակը երկու անգամ պակաս է եղել, քան 1998 թվականին: 2010 թվականին Արարատի մարզից մեկնել է 75 տոկոսով պակաս մարդ, քան 2005 թվականին, ընդ որում, Արարատ վերադարձել է նույնքան մարդ. նշված ժամանակահատվածում դեպի Արարատի մարզ բնակչության միգրացիոն ներհոսքն ակնհայտ է:

Տնտեսության սյուները


Արարատի մարզում **բարձր տեմպով աճել է** արդյունաբերական արտադրանքի ծավալը: 2001-2011 թվականներին՝ նախորդ տասնամյակի ընթացքում, Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալն **աճել է կրկնակի բարձր տեմպով**, քան միջինը հանրապետությունում: 2011 թվականին Արարատի մարզում ընթացիկ գներով **մեկուկես անգամ ավելի մեծ ծավալով** արդյունաբերական արտադրանք է արտադրվել, քան 2007 թվականին:

2011 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալը Արարատի մարզում ընթացիկ գներով կազմել է 2001 թվականի արդյունաբերական արտադրանքի ծավալի հնգապատիկը:


2011 թվականին մշակող արդյունաբերության ամենամեծ տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրանքի համախառն ծավալում հանրապետությունում Արարատի մարզում է՝ շուրջ 90 տոկոս:

2011 թվականին Արարատի մարզում մշակող արդյունաբերությունը 2007

Արդյունաբերական արտադրանքի ծավալն Արարատի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)




Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը 2011թ՝ 2001թ-ի նկատմամբ



Թվականի համեմատ տվել է ընթացիկ գներով **մեկուկես անգամ ավելի** ծավալով արտադրանք: Եթե նախորդ տասնամյակում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը հանրապետությունում միջինում գրեթե եռապատկվել

2011 թվականին, արդյունաբերական արտադրանքի ծավալով Արարատի մարզը հանրապետության լավագույն երեք մարզերից մեկն է:


Արարատի մարզի մասնաբաժինը 33 մարզերի մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալում, 2011թ.



2011 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն Արարատի մարզում 2001 թվականի ծավալի հնգապատիկն է՝ ընթացիկ գներով:

Է, ապա Արարատում **հնգապատկվել է**: Արարատի մարզում 2001-2011 թվականներին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը մայրաքաղաք Երևանի համեմատ աճել է **կրկնակի ավելի մեծ** տեմպով:

Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալն Արարատի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)




Արարատի մարզում Է արտադրվում հանրապետության մարզերում մշակող արտադրության ծավալի մեկ քառորդը:

Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն Արարատի մարզում 2011 թվականին ընթացիկ գներով կազմել է 2001 թվականի արտադրանքի **քառապատիկը**: Հանքագործական արդյունաբերության արտադրանքի ծավալն ընթացիկ գներով Արարատի մարզում 2006 թվականի համեմատ **կրկնապատկվել է**:

2011 թվականին Արարատի մարզում էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության և բաշխման ծավալները կազմել են 2001 թվականի ծավալի **քառապատիկը**՝ ընթացիկ գներով, իսկ 2007 թվականի համեմատ՝ ավելացել են մեկ հինգերորդով:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն Արարատի մարզում (2011թ.)



2010 թվականին Արարատի մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալի առյուծի բաժինը ընթացիկ գներով՝ շուրջ 40 տոկոս, կազմել է սնդամթերքի և խմիչքների արտադրանքը:


Սնդամթերքի արտադրության ծավալով Արարատի մարզը երևան քաղաքի և Կոտայքի հետ առաջին եռյակում է:

2010 թվականին Արարատում է արտադրվել Հայաստանի Հանրապետության մարզերում արտադրված սննդամթերքի և խմիչքների մեկ հիլոգերոդից ավելին:


Արարատը խմիչքների արտադրության ծավալով առաջինն է հանրապետության մարզերի թվում:

Արարատի մարզում 2010 թվականին արտադրվել են **նույնքան ծավալի** խմիչքներ, որքան հանրապետության **ուրիշ մարզերում միասին վերցրած**:

Խմիչքների արտադրությունը ՀՀ մարզերում, 2010թ.



Սննդամթերքի արտադրությունը ՀՀ մարզերում, 2010թ.



Հանրապետության մարզերում արտադրված խմիչքների **մեկ երրորդից ավելին** արտադրվում է Արարատի մարզում:

Հայկական ծխախոտային արտադրատեսակները արտադրվում են բացառապես Արարատի մարզում և Երևան քաղաքում:

Արարատի մարզում է արտադրվում ճաշաստանում արտադրված ծխախոտային արտադրատեսակների կեսից ավելին:

Արարատի մարզում է արտադրվում ոչ մետաղական հանքային արտադրատեսակների զգալի ծավալը: Արարատում արտադրվող ոչ մետաղական հանքային արտադրատեսակների ծավալը հանրապետության մարզերից զիջում է միայն Կոտայքին:

Արարատում է արտադրվում ճաշաստանի մարզերում արտադրված ոչ մետաղական հանքային արտադրատեսակների 40 տոկոսից ավելին:

Հիմնային մետաղների արտադրությամբ Արարատը, Լոռու և Կոտայքի հետ միասին, **գլխավորում է հանրապետության մարզերի ցանկը:**


2010 թվականին 2004 թվականի համեմատ Արարատի մարզում ծխախոտային արտադրատեսակների արտադրության ծավալն ընթացիկ գներով աճել է **մեկ քառորդով**, սննդամթերքի և խմիչքների արտադրության ծավալը՝ **ավելի քան 40 տոկոսով**, հիմնային մետաղների արտադրությունը՝ **80 տոկոսով**, իսկ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության ծավալը **կրկնապատկվել է:**

Գյուղատնտեսություն

Նախորդ տասնամյակում Արարատի մարզում գյուղատնտեսությունը էականորեն զարգացել է: 2006-2011 թվականներին Արարատի մարզում գյուղատնտեսական համախառն արտադրանքն ընթացիկ գներով կրկնապատկվել է:

2011 թվականին գյուղատնտեսական համախառն արտադրանքն Արարատի մարզում ընթացիկ գներով 2001 թվականի համախառն արտադրանքի եռապատիկն է:


Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Արարատի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2011 թվականին Արարատի մարզն ապահովել է հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի շուրջ **17 տոկոսը**՝ արտադրության ծավալով **երկրորդը** երկրում:

Եթե 2001 թվականին Արարատյան դաշտավայրի բերրի հողում փոքած Արարատի մարզում բուսաբուծությունը տալիս էր նույնքան գյուղատնտեսական համախառն արտադրանք՝ դրամական արտահայտությամբ, որքան անասնաբուծությունը, ապա 2011 թվականին, բուսաբուծության համախառն արտադրանքն Արարատի մարզում **հնգապատիկ ավելի էր**, քան անասնաբուծության համախառն արտադրանքը:


Բուսաբուծության ծավալները ՀՀ մարզերում, 2010թ. (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Արարատի մարզը չայաստանի շանրապետության առաջատարն է բուսաբուծության համախառն արտադրանքով:

Արարատի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքը **սույնքան է**, որքան հանրապետության **վեց մարզերում միասին**:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները (հա) և համախառն բերքը (հազ. տոննա)



2010 թվականին Արարատի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով 2000 թվականին արտադրանքի ծավալի եռապատիկն է:

Արարատի մարզն ապահովում է հանրապետության բուսաբուծության համախառն արտադրանքի **ավելի քան մեկ հինգերորդը**՝ 23 տոկոսը:


2005-2010 թվականներին Արարատի մարզում բուսաբուծության համախառն արտադրանքն ընթացիկ գներով **կրկնապատկվել է**:

2010 թվականին անասնաբուծության համախառն արտադրանքն Արարատի մարզում **ավելացել է** շուրջ մեկ հինգերորդով:

2000 թվականից ի վեր հացահատիկային և հատիկաընդեղային մշակաբույսերի ցանքատարածություններն աստիճանականորեն փոխարինվել են Արարատյան դաշտավայրի բերրի հողին ու կլիմայական պայմաններին համապատասխան ավելի եկամտաբեր մշակաբույսերով:

2011 թվականին բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածություններն Արարատի մարզում 2001 թվականի համեմատ **ավելացել են 60 տոկոս**:

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները (հա) և համախառն բերքը (հազ. տոննա)



2011 թվականին բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքի ավելի քան մեկ քառորդն արտադրվել է Արարատի մարզում:

սով, իսկ բերքը՝ **կրկնապատկվել է** թե՛ ցանքատարածությունների ընդլայնման, թե՛ հողատարածքների ավելի արդյունավետ մշակման արդյունքում:

Արարատի մարզը բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածություն-


Բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունն Արարատի մարզում ամենաբարձրն է Հայաստանի Հանրապետությունում:

ների մակերեսով և համախառն բերքի ծավալով հանրապետությունում՝ Արմավիրից հետո **երկրորդն է:**

Արարատում ֆերմերները բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների մեկ հեկտարից ստանում են **41 տոննայից ավելի** բերք՝ **կրկնակի** ավելի, քան մեկ հեկտարից ստանում են հանրապետության ուրիշ մարզերում:

2011 թվականին բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսն Արարատի մարզում 2000 թվականին մշակված ցանքատարածությունների **եռապատիկն է**, իսկ 2011 թվականին բոստանային մշակաբույսերից ստացված բերքը՝ 2000 թվականի **վեցապատիկը**: Ակնհայտ է բոստանային

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները (հա) և համախառն բերքը (հազ. տոննա)



մշակաբույսերի մշակման արդյունավետության կտրուկ աճը՝ ցանքատարածությունների ընդլայնմանը զուգահեռ:

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսով և ար-


տադրված բերքի ծավալով Արարատի մարզը հանրապետությունում **երկրորդն է**։ Արարատի մարզում են հանրապետությունում բոստանային մշակաբույսերի

Արարատի մարզում է արտադրվել բոստանային մշակաբույսերի ամբողջ բերքի շուրջ մեկ երրորդը:

ցանքատարածությունների **մեկ քառորդից ավելին**:

Բոստանային մշակաբույսերի բերքատվությունը Արարատի մարզում **ամենաբարձրն է հանրապետությունում**: 2011 թվականին մեկ հեկտարից Արարատի մարզում ֆերմերները ստացել են կրկնակի ավելի բերք, քան 2000 թվա-

Բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի բերքատվությունը 77 մարզերում, 2010թ. (g/ha)



կանին:


Տարեց-տարի Արարատի մարզում ավելացել են պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները. 2010 թվականին Արարատի մարզում պտղի և հատապտղի տնկարկների տարածությունները 2000 թվականի **կրկնապա-**

Արարատի մարզն ապահովում է հանրապետության պտղի և հատապտղի բերքի գրեթե մեկ երրորդը՝ ամենամեծ ծավալը երկրում:

տիկն են: Արարատի մարզում են հանրապետության պտղի և հատապտղի տնկարկների տարածությունների գրեթե **մեկ հինգերորդը:**

2011 թվականին պտղի և հատապտղի բերքն Արարատի մարզում 2003 թվականի հնգապատիկն է:

Արարատի մարզը հանրապետության պտղի և հատապտղի բերքի՝ **ամենամեծ արտադրողն է:** 2007-2011 թվականներին՝ **հինգ տարում**, Արարատի մարզում արտադրվել է պտղի և հատապտղի **ավելի շատ բերք**, քան 1997-2006 թվականներին՝ **տասը տարում:**




Արարատի մարզում է հանրապետության խաղողի տնկարկների տարածության **գրեթե 30 տոկոսը:** 2010 թվականին խաղողի տնկարկների մակերեսը Արարատի մարզում 2003 թվականի համեմատ ընդլայնվել է գրեթե **մեկուկես անգամ:** Արարատի մարզում մեկ հեկտարից ստանում են նույնքան խաղող, որքան մեկ հեկտարից հանրապետության հինգ մարզերում միասին: 2010

Արարատի մարզում խաղողի բերքատվությունն ամենաբարձրն է հանրապետությունում:


Թվականին խաղողի բերքատվությունն Արարատի մարզում 2001 թվականի համեմատ ավելացել է **երեք քառորդով**: Հանրապետությունում արտադրված յուրաքանչյուր տասը տոննա խաղողից չորսն արտադրվում է Արարատի մարզում: 2011 թվականին Արարատի մարզում արտադրվել է երկու անգամ ավելի շատ խաղող, քան 2003 թվականին:

2011 թվականին Արարատի մարզում արտադրվել է գրեթե նույնքան խաղող, որքան 1998 թվականին ողջ հանրապետությունում:

Խաղողի տնկարկների տարածությունները Արարատի մարզում (հա)



Խաղողի համախառն բերքն Արարատի մարզում (հա)



Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը
և Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանը մասնակցում են
Արտաշատի 2200-ամյակին նվիրված տոնախմբությանը




Նախորդ տասնամյակում Արարատի մարզում աննախադեպ թափով զարգացել է շինարարությունը: Նույն ժամանակահատվածում շինարարության ծավալը մայրաքաղաք Երևանում և միջինում հանրապետությունում ընթացիկ գներով ընդամենը կրկնապատկվել է: Շինարարության աճի

2010 թվականին Արարատի մարզում իրականացված շինարարության համախառն ծավալն ընթացիկ գներով գերազանցում է 2003 թվականի ծավալը տասներեքապատիկ անգամ:

տեմպերով Արարատի մարզը հանրապետությունում **անգերազանցելի է**: 2010 թվականին Արարատի մարզում 2006 թվականի համեմատ ընթացիկ գներով **հինգուկես անգամ ավելի մեծ** ծավալի շինարարական աշխատանքներ են իրականացվել: Նույն ժամանակահատվածում մայրաքաղաք Երևանում շինարարության ծավալն ընթացիկ գներով աճել է երկու երրորդով, իսկ հանրապետությունում՝ միջինում շուրջ 90 տոկոսով:


Շինարարության ծավալներն Արարատի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2007-2010 թվականներին՝ չորս տարում, Արարատի մարզում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը եղել է գրեթե նույնքան, որքան 2000-2006 թվականներին՝ **յոթ տարում**: Միայն 2009 թվականին Արա-

րատի մարզում շահագործման են հանձնվել ավելի մեծ ընդհանուր մակերեսով բնակելի շենքեր, քան 2001-2003 թվականներին՝ միասին:

2009 թվականին հանրապետության մարզերում բնակչության միջոցներով իրականացված ամենամեծ ծավալի շինարարությունը բաժին է ընկել Արարատի մարզին:




Արարատի մարզում տարեց-տարի **ավելացել են** բեռնաշրջանառության ծավալները: 2009-2010 թվականներին՝ երկու տարում, Արարատի մարզում բեռնաշրջանառության ծավալը **գերազանցել է** 2000-2004 թվականների հինգ տարիների ծավալը:

Արարատի մարզում տարեց-տարի **ավելացել է** նաև ուղևորափոխադրության շրջանառությունը: 2010 թվականին Արարատի մարզում փոխադրվել է **երկու անգամ ավելի շատ** ուղևոր, քան 2005 թվականին, ավելի շատ, քան 2004-2005 թվականներին՝ երկու տարում միասին: 2010 թվականին ուղևորաշրջա-


2010 թվականին Արարատի մարզում բեռնաշրջանառության ծավալը 2005 թվականի համեմատ գրեթե երկուսուկես անգամ ավել է:

Բեռնաշրջանառության ծավալների համեմատականը Արարատի մարզում



Նաառությունն Արարատի մարզում՝ ավելի քան 61.5 միլիոն ուղևոր-կիլոմետր, մեկ քառորդով **ավելի էր**, քան 2003-2004 թվականներին՝ միասին: Արարատի մարզում ուղևորաշրջանառությունը 2010 թվականին 2007 թվականի համեմատ ավելացել էր մեկ քառորդով:


Ուղևորաշրջանառությունը Արարատի մարզում (հազ. մարդ)



Արարատի մարզում, 2004 թվականից՝ տարեց-տարի ավելացել է **մանրաթափ առևտրի** օբյեկտների թիվը. 2011 թվականին Արարատի մարզում գործում էր **երկու անգամ ավելի շատ** մանրաթափ առևտրի օբյեկտ, քան 2004 թվականին: Կոտայքից հետո հանրապետության մարզերում մանրաթափ առևտրի օբյեկտների ամենամեծ թվաքանակն Արարատում է:

Գործարար միջավայրի առողջացմանն ու հարկային վարչարարության կրճատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության անսախաղեպ քայլերի արդյունքում, վերջին տարիներին հանրապետության մարզերում նոր շունչ են առել փոքր և միջին ձեռնարկությունները՝ անսախաղեպ զարգանալով ճգնաժամի տարիներին ու հետճգնաժամային ժամանակաշրջանում: Այս զարգացումը հատկապես շոշափելի է եղել Արարատի մարզում: Այսպես, 2008-2011 թվականներին Արարատի մարզում մանրածախ առևտրի օբյեկտների թիվն **ավելացել է մեկ քառորդով**, ինչն այդ ժամանակահատվածում **անսախաղեպ է** հանրապետությունում: Նույն ժամանակահատվածում մայրաքաղաք Երևանում և հանրապետությունում մանրածախ առևտրի օբյեկտների թիվը միջինում ավելացել է շուրջ տասը տոկոսով:


Արարատի մանրածախի 33 մարզերի խանութների ընդհանուր քանակում, 2011թ.



Մանրածախ առևտրի շրջանառությունն Արարատի մարզում 2011 թվականին կազմել է 2002 թվականի առևտրաշրջանառության յոթնապատիկը՝ աճելով ավելի բարձր տեմպով, քան հանրապետության որևէ մարզում և մայրաքաղաք Երևանում:

2011 թվականի ընթացքում մանրածախ առևտրի շրջանառությունն Արարատի մարզում միայն մեկ տարում ավելացել է **մեկուկես անգամ. ավելի բարձր տեմպով**՝ քան մայրաքաղաք Երևանում և հանրապետության որևէ մարզում:

Մանրածախ առևտրի շրջանառությունն Արարատի մարզում (մլն. դրամ)




Նույն ժամանակահատվածում առևտրաշրջանառությունը հասրապետությունում և Երևան քաղաքում ավելացել է ընդհամենը 10 տոկոսով:

2011 թվականին Արարատի մարզում բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը 2006 թվականի համեմատ **ավելացել է երկուսուկես անգամ**:

2011 թվականին բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը Արարատի մարզում 2003 թվականի հնգապատիկն էր:

Բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունն Արարատի մարզում (հազ. դրամ)



Ամենամեծ թվով խանութներ Հայաստանի Հանրապետության մարզերում գործում են Արարատում՝ գրեթե նույնքան, որքան հանրապետության վեց մարզերում միասին: 2011 թվականին հանրապետության մարզերում խանութների մեկ քառորդից ավելին գործում էր Արարատի մարզում:

2011 թվականին Արարատի մարզում գործում էր երեք անգամ ավելի շատ խանութ, քան 2004 թվականին, երկու անգամ ավելի, քան 2007 թվականին:

2011 թվականին Արարատի մարզում խանութների շրջանառությունը 2007 թվականի համեմատ **ավելի քան կրկնապատկվել է**, իսկ 2010 թվականի համեմատ՝ **ավելացել** գրեթե մեկ վեցերորդով:


2011 թվականին Արարատի մարզում սպառողական ապրանքների շուկաների շրջանառությունը կազմել է 2008 թվականի շրջանառության գրեթե իննապատիկը:

Հանրապետությունում սպառողական ապրանքների շուկաների շրջանառությունն **ամենաարագ ու աննախադեպ տեմպերով ավելացել է** Արարատի մարզում: Միայն 2011 թվականին՝ մեկ տարվա ընթացքում, Արարատի մարզում սպառողական ապրանքների շուկաների շրջանառությունն **ավելի քան քառապատկվել է**: 2011 թվականին հանրապետության սպառողական ապրանքների շուկաների շրջանառության **շուրջ 30 տոկոսը** կատարվել է Արարատի մարզում:

2011 թվականին ծառայությունների ծավալն Արարատի մարզում 2008 թվականի համեմատ **կրկնապատկվել է**: 2010 թվականին կրթության ծառայությունների ծավալն Արարատի մարզում 2008 թվականի համեմատ ավելի է 2.3 անգամ: Կրթության ոլորտում ծառայությունների ծավալի աճի նման տեմպը Նշված ժամանակահատվածում **աննախադեպ է** հանրապետությունում. մայ-

րաբարաբ Երևանում և հանրապետությունում նշված ժամանակահատվածում կրթության ծառայությունների ծավալը միջինում ավելացել է շուրջ 10 տոկոսով:

Ծառայությունների ծավալը Արարատի մարզում (մլն. դրամ)



Արարատի մարզից արտահանման ծավալները 2010 թվականին գերազանցել են հարևան Թուրքիայի մի շարք սահմանամերձ նահանգներից արտահանման ծավալները միասին վերցրած:


2010 թվականին Արարատի մարզի արտահանման ծավալներն ավելի մեծ էին, քան Թուրքիայի, նախկինում հիմնականում հայաբնակ՝ Կարս, Թունջելի, Երզնիզան (Երզնկա), Բայբուրդ (Բաբերդ), Արդահան, Բիթլիս, Բինգյոլ և Մուշ նահանգներինը միասին, այն դեպքում, երբ այդ մարզերի բնակչությունը Արարատի մարզի բնակչությանը գերազանցում է վեց անգամ, ընդ որում, Արարատի մարզը տարածքով զիջում է դրանցից յուրաքանչյուրին, իսկ բոլորից միասին փոքր է երեսուն անգամ:

2010 թվականին Արարատի մարզի արտահանման ծավալները գերազանցել են հարևան Թուրքիայի Վանի նահանգի արտահանման ծավալները գրեթե


Կրկնակի անգամ և կազմել գրեթե նույնքան, որքան Թուրքիայի հյուսիս արևելյան Էրզրում նահանգինը:

Անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումներն Արարատի մարզում **նվազել են** 2005 թվականից սկսած. 2010 թվականին Արարատի մարզում անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումները 2005 թվականի համեմատ նվազել են **ավելի քան 90 տոկոսով**: 2005 թվականին Արարատի մարզում անշարժ աղբյուրներից արտանետումները գրեթե **տասնչորս անգամ** ավելի էին, քան 2010 թվականին: 2010 թվականին

Մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից Արարատի մարզում (տոննա)



Որսված վնասակար նյութերի քանակն Արարատի մարզում (տոննա)



Արարատի մարզում անշարժ աղբյուրներից արտանետումները տասներեք անգամ պակաս էին, քան մայրաքաղաք Երևանում:

Մթնոլորտային արտանետումների կրճատումն արդյունք է Արարատի մարզում ներդրված Նոր տեխնոլոգիաների կիրառման ինչի շնորհիվ որսված վնասակար նյութերի ծավալն աննախադեպ աճել է: 2010 թվականին որսված նյութերի քանակն Արարատի մարզում **շուրջ մեկուկես անգամ ավելացել է**: 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունում որսված վնասակար նյութերի ընդհանուր ծավալի **85 տոկոսը** բաժին է ընկնում Արարատի մարզին:

Հայաստանում առաջացած թափոնների քանակը **նվազագույնն է** Արարատի մարզում՝ 2010 թվականին՝ 9 տոննա, այն դեպքում, երբ հանրապետությունում առաջացած թափոնների ընդհանուր ծավալը 2010 թվականին կազմել է ավելի քան 17 միլիոն տոննա:

2007-2011 թվականներին Արարատի մարզի **60 համայնքներում** հիմնանորոգվել և վերականգնվել են ոռոգման համակարգերը, կառուցվել են ջրագծեր, երրորդ կարգի ջրանցքներ, հորատվել խորքային հորեր, կառուցվել, նորոգվել և մաքրվել կոլեկտորադրենաժային ցանցեր: Մասնավորապես՝ **Արարատ, Մասիս և Վեդի** քաղաքներում, **Ագատավան, Բաղրամյան, Բերքանուշ, Արարատ, Ղուկասավան, Տափերական, Սուրենավան, Ջրահովիտ, Նոր Կյուրին, Այգեպատ, Հայանիստ, Ջրաշեն, Մարմարաշեն, Շահումյան, Բուրաստան, Դարբնիկ, Դարակերտ, Դաշտավան, Նորամարգ, Նոր կյանք, Նիգամի, Չորակ, Այգավան, Սայաթ-Նովա, Այգեստան, Բերդիկ, Այգեգարդ, Գետափնյա, Գոռավան, Հովտաշեն և Սիս** համայնքներում հիմնանորոգվել են ոռոգման համակարգերը:

Կառուցվել է **Մրգավետ-Մխչյան-Արաքսավան-Դիմիտրով** ոռոգման ջրագիծը: **Վեդի** քաղաքում, **Սիսավան, Գինեվետ, Նոր Կյանք, Ջրահովիտ, Ոսկետափ, Դաշտավան, Նորաբաց, Փոքր Վեդի, Արալեզ, Սուրենավան, Լուսառատ, Մասիս, Դարակերտ, Գոռավան, Ուրցաձոր** համայնքներում կառուցվել են երրորդ կարգի ջրանցքներ:

Արարատ և Մասիս քաղաքներում, **Դիտակ, Լանջազատ, Ղուկասավան, Մրգավետ, Նիգամի, Արբաթ, Դարբնիկ, Վերին Դվին, Բաղրամյան, Դալար, Հովտաշեն, Ագատավան, Դարակերտ, Ռանչպար, Մխչյան, Գետազատ, Այնթապ, Սիփանիկ, Դիմիտրով, Ջրահովիտ, Մրգավան, Տափերական, Բերքանուշ, Սայաթ-Նովա, Դաշտավան, Չորակ, Սիս, Բուրաստան, Ու-**



Արդիական հոսքագիծ «Արթֆուդ» ընկերությունում



«Մասիս տորակո» ընկերության ժամանակակից արտադրամասը Դալարիկ համայնքում



Պռոշյանի գիսու գործարանի գիսու ֆերմենտացման աշտարակները



տան, Նորամարգ, Արաքսավան, Հայանիստ, Մարմարաշեն, Շահումյան, Սուրենավան և Երասխ համայնքներում նորոգվել և մաքրվել են կոլեկտորադրենաժային ցանցերը: Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման արդյունքում մաքրվել են **470 կիլոմետր** ընդհանուր երկարությամբ դրենաժային կոլեկտորներ, ինչի արդյունքում նվազել է Արարատի մարզի գրունտային ջրերի մակարդակը՝ հողերը զերծ պահելով աղակալումից: Կառուցվել և վերականգնվել է **50 խորքային հոր**:

Արտաշատ քաղաքում և **Բերդիկ** համայնքներում հողերի ոռոգման նպատակով հորատվել են խորքային հորեր: Ձկնաբուծության զարգացման նպատակով հորատվել է **13 խորքային հոր**:

Այգեգարդում կառուցված ինքնահոս համակարգն ունի առավել քան **700 հեկտար** հողատարածք ոռոգելու հնարավորություն: Արարատի մարզի մի շարք համայնքներում ֆերմերների համար կառուցվել է ոռոգման կաթիլային համակարգ, որը հնարավորություն է տալիս պլանավորել ոռոգումը՝ ըստ խոնավաչափի, պարարտացումը կատարել կաթիլային համակարգի միջոցով՝ ինսայելով ջուրն ու աշխատանքը:

2011 թվականին վերաբացվել է վերականգնված **«Ռանչպար 1»** պոմպակայանը, որը ոռոգում է **6,100 հեկտար** հողատարածք՝ ոռոգման ջրով ապահովելով Արարատի մարզի **23 համայնքների 10 հազար ջրօգտագործողներին**: Մաքրվել և խորացվել են պոմպակայանի ջրընդունիչը, կոլեկտորները, տեղադրվել են նոր պոմպեր և խողովակաշարեր, ամբողջովին վերանորոգվել է պոմպակայանի շենքը: Պոմպակայանի կոլեկտորում տեղադրվել է պատվար, ինչը կնվազեցնի գրունտային ջրերի մակարդակը և կբարելավի Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վիճակը:

2011 թվականին ավարտվել է **Արմաշի** և **Ավշար-Այգեվանի** պոմպակայանների վերականգնումը, որոնք վերագինվել են նոր սարքավորումներով, ինչն էականորեն մեծացրել է դրանց հզորությունները:

Արարատի մարզի համայնքներում կառուցվել են **800 տոննա** ընդհանուր տարողությամբ սառնարաններ:

2011 թվականին Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում տեղադրվել են **չրաջափեր**:

2010 թվականին Արարատի մարզի համայնքներում տնկվել է շուրջ **12,000 բուսակ և տնկի**:

2010 թվականին տրամադրված 1,450 կգ թունաքիմիկատներով Արարատի մարզի շուրջ **90 համայնքում**՝ 11,600 հա տարածության վրա պայթար է կազմակերպվել մկնանման կրծողների դեմ:

Մարզի **Նոր-Կյանք** համայնքում ստեղծվել է գյուղացիական կոոպերացիա, որը զբաղված է ցորենի բարձր բերքատու տեսակների սերմերի արտադրությամբ: **Մասիս** քաղաքում ստեղծվել է հացահատիկի սերմարտադրող տնտեսություն:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մարզի գյուղացիական տնտեսություններին տրամադրել է գարնանացան գարու **66 տոննա էլիտային** և **10 տոննա առաջին** վերարտադրության սերմացու: 2011 թվականին Արարատի մարզի գյուղացիական տնտեսությունները ստացել են շուրջ տասը տոննա եգիպտացորենի սերմացու:

2011 թվականին Արարատի մարզի **18 համայնքներում 48 հակակարկտային կայանների** տեղակայման արդյունքում բնական աղետի հետևանքով մարզի ցանքատարածություններն էական վնասներ չունեցան, իսկ Արարատի մարզում կարկտահարված տարածքների մակերեսը հանրապետության մյուս մարզերի համեմատ դարձավ նվազագույնը: 2011 թվականին բնակլիմայական բարենպաստ պայմանների և Արարատի մարզում տեղադրված հակակարկտա-



«Եթե առաջ այս հակակարկտային կայանները տեղադրվում էին իրարից մեկ կիլոմետր հեռավորության վրա, ապա այժմ դրանք տեղակայված են միմյանցից յոթ կիլոմետրի վրա, և արդյունավետությունն էլ շուրջ քսանհինգ տոկոսով ավելի բարձր է»:

Սուրեն Հովսեփյան - «Մևանժ» ՊՈԱԿ-ի օպերատիվ կառավարման կենտրոնի պետ

յին կայանների գործարկման արդյունքում ծիրանի բերքը 2011 թվականին 2010 թվականի համեմատ **հնգապատիկ ավելի էր**: 2012 թվականին Արարատի մարզում կտեղակայվեն **ևս 12 հակակարկտային կայաններ**, որոնց շոշափելի արդյունքը մարզի գյուղացիական տնտեսությունները կզգան հետագա գյուղատնտեսական տարիներին:

2011թ.-ին **Նորամարզ** և **Այգեստան** համայնքներին հատկացվել են տրակտորներ:

Արարատի մարզում ավելի քան **10 հազար ֆերմերներ** մասնակցել են ուսուցողական դասընթացների, շուրջ երեք հարյուրը ստացել են փոքր վարկեր տնտեսությունը զարգացնելու համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով 2010 թվականին Արարատի մարզում արտադրված ավելի քան **93 հազար տոննա** խաղողից ոչ մի ողկույզ դաշտում չի մնացել: Վերամշակող ընկերությունները մթերել են ավելի քան **72 հազար տոննա**, սառնարաններում պահպանվել է ավելի քան 14 հազար տոննա, շուկաներում և այլ կազմակերպությունների կողմից իրացվել է ավելի քան վեց հազար տոննա բերք:

Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների թիվն Արարատում հասել է շուրջ **1,100**-ի:

Արարատի մարզում գործող բանջարեղեն ու պտուղ վերամշակող երեք ձեռնարկությունները՝ **«Սպայկա» ՍՊԸ**-ն և անհատ ձեռներեցները ֆերմերներից 2010 թվականին մթերել են շուրջ **19 հազար տոննա** բանջարեղենի բերք: 2011 թվականին Արարատի մարզում արտադրված ավելի քան **26 հազար տոննա ծիրանի** մեծ մասն արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն: Պահածոների գործարանները մթերել են ավելի քան 26.5 հազար տոննա բանջարեղեն և շուրջ **500 տոննա պտուղ**:

«Մասիս տորբակո» ընկերությունը, Արարատի մարզում արտերկրից հրավիրված մասնագետների մասնակցությամբ և շուրջ 5,200 գյուղացիական տնտեսությունների հետ համագործակցելով, արտադրում է սիգար: 2011 թվականին

Արարատի մարզում ֆերմերների կողմից մշակվող ծխախոտի հողատարածքները հասել են **800 հեկտարի**՝ մեկ տարում գրեթե կրկնապատկվելով:

Արարատի մարզում տարեց-տարի ավելացել է ձկնաբուծարանների թիվը. եթե 1996 թվականին տարեկան արտադրվել է 15 տոննա իշխան ձուկ, իսկ 2000 թվականին՝ շուրջ **1,500 տոննա**, ապա 2011 թվականին Արարատի մար-



Յայկազ Ռուբինյանը ձկնարտադրությամբ զբաղվող «Յունիֆիշ» ՍՊԸ-ի գլխավոր մասնագետն է: ԳԱԱ-ի անդամը, կոչումով ձկնաբույծն ու կենսաբանական գիտությունների թեկնածուն՝ 2006 թվականից գիտական գործունեությունը համատեղում է արակտիկ գործունեության հետ: Միաժամանակ դասախոսական, գիտական և արտադրական գործունեությամբ զբաղվող Յայկազ Ռուբինյանը 1980 թվականին ավարտել է Աստրախանի ձկնային ինստիտուտը, Մոսկվայում՝ ասպիրանտուրան ու անմիջապես աշխատանքի անցել Երևանում՝ Գիտությունների Ազգային Ակադեմիայում: 55-ամյա գիտնական-ձկնաբույծի ընտանիքը բաղկացած է չորս անձից: Տանը բոլորն էլ աշխատանք ունեն, սակայն Յայկազի խոսքե-

րով, հիմնական գումար աշխատողն ինքն է:

«Աշխատավարձը, որը ստանում եմ «Յունիֆիշ» ՍՊԸ-ում մի քանի անգամ գերազանցում է այն աշխատավարձին, որը ստանում եմ ԳԱԱ-ից: Սակայն իմ երկու աշխատանքները, պիտի ասեմ, որ փոխկապակցված են ու շատ անհրաժեշտ: Ձկնաբուծարանում վերահսկում եմ որչ աշխատանքը՝ սկսած արտադրությունից, վերջացրած՝ իրացումով: Նաև աշխատակիցների ընտրությունն է իմ պարտականությունների մեջ մտնում,– ասում է Յայկազ Ռուբինյանը,– Ես յոթ տարի է դասավանդում եմ Գյուղատնտեսության ինստիտուտում: Այնտեղ վերջին տարիներին բացվել է մասնաճյուղ, որտեղ պատրաստում են ձկան տեխնոլոգներ և ձկնաբույծներ: Հենց իմ ուսանողներից էլ ընտրում եմ նրանց, ովքեր կարող են աշխատել ձկնաբուծարանում: Ես այս ոլորտում մեծ հեռանկարներ եմ տեսնում: Այն ինչ մենք արտադրում ենք, հիմնականում արտահանում ենք և վստահեցնում եմ, որ մեր ապրանքի պահանջարկը կա»:



զում գործող շուրջ 140 ձկնաբուծարաններն արտադրել են շուրջ **3,500 տոննա թառափ և իշխան**, որը սպառվել է հանրապետությունում և արտերկրում: Ձկնարդյունաբերության ընդհանուր ծավալը Հայաստանում կարող է հարյուրապատկվել, քանի որ Արարատյան դաշտավայրն արտեզյան ջրերի մեծ պաշար ունի: Արտեզյան հորերը տալիս են բարձր կարգի ջուր և հնարավորություն՝ առանց էլեկտրաէներգիայի ծախսի ջրամատակարարում ապահովել ձկնաբուծույծներին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակում է օտարերկրյա պետությունների կառավարությունների հետ բանակցությունները՝ Հայաստանի ձկնարդյունաբերողների համար արտադրանքի արտահանման բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով:

Արարատի մարզում զարգանում է մեղվաբուծությունը: Եթե 2009 թվականին մարզում կար շուրջ ութ հազար մեղվաընտանիք, ապա 2010 թվականին՝ **գրեթե տասնմեկ հազար**:

Պռոշյանի գինու գործարանի հարուստ մառանը



Արարատի մարզի **Ավշար** համայնքում գործող համակցված կերերի կոմբինատը վերագինվել է Նոր արտադրական հզորություններով և 2011 թվականից տարածաշրջանում անասնապահությանը զբաղվող ֆերմերային տնտեսությունների անասնակերով է ապահովում:

2008 թվականից **Մարմարաշեն** համայնքում գործում է քարի վերամշակման գործարան: 2009 թվականից **Սրգավանում** գործում է **Պռոշյանի գինու գործարանի մասնաճյուղը**: 2010 թվականից Արարատի մարզում գործում է **«Արարատ-գրուպ»** հանքային ջրերի գործարանը: 2011 թվականին Արտաշատ քաղաքում կառուցվել և գործարկվել է զովացուցիչ ըմպելիքների և ջրերի գործարան:

2008 թվականից Արարատի մարզի Սուրենավան համայնքում գործում է **«Մանանա-Գրեյն»** քարի վերամշակման գործարանը: 2009 թվականից **Սուրենավան** համայնքում գործում է Նաև օբսիդացված ճանապարհային և շինարարական բիտում արտադրող հայ-ռուսական ձեռնարկությունը, ուր ներդրվել է ժամանակակից գործարանային լաբորատորիան և ղեկավարող համակարգը, մաքրման սարքավորումներ, իսկ շրջակա միջավայր արտանետումները կրճատելու համար տեղադրվել է բիտումի գոլորշիների կոնդենսացման մեքենայացված համակարգ: 2011 թվականին Արարատի մարզի Սուրենավան գյուղի **«Արբիտ» ՍՊԸ**-ի նավթամշակման գործարանում Մ-100 տեսակի մազութից արտազատվել է առաջին գույրուկը:



Ավշարի գինու գործարանը՝ արդիական ացված տեխնոլոգիաներով





«2005 թվականից աշխատում եմ Մասիսի «Ալիշան» ՍՊԸ-ում: Ընտանիքում ութ անձ ենք: Աշխատանք ունենք ես, ամուսինս ու մեծ տղաս: Կոնկրետ իմ աշխատանքից շատ գոհ եմ: Մեր ձեռնարկությունում կան սեզոնային և մշտական աշխատողներ: Ես մշտականներից եմ ու դա այսօրվա դրությամբ խիստ կարևոր հանգամանք է ինձ համար: Հիմա ամենադժվարը ոչ թե բարձր կամ ցածր վարձատրության հարցն է, այլ կայուն աշխատատեղ ունենալը: Այդ առումով ես կասեի, որ իմ բախտը բերել է: Վեց-յոթ տարի է աշխատում եմ, աշխատավարձս կայուն ստանում եմ, տնօրինության վերաբերմունքն էլ շատ դրական է, սրանք են այն նախապայմանները, որ շատ-շատերս կարենորում ենք»:

Մարինե Դանիելյան, «Ալիշան» ՍՊԸ աշխատակից

2007-2011 թվականներին **Արտաշատի «Արտֆուդ»** ընկերությունում ընդլայնվել է բնական հյութերի արտադրությունը, Մասիսի **«Ալիշան»** ընկերությունը ներդրել է մուրաբաների նոր հոսքագիծ, **«Արտաշատ Վինկոն»** և **Ավշարի գինու-կոնյակի գործարանները**՝ կոնյակի արտադրության նոր տեխնոլոգիաներ: **Արարատի ցեմենտի գործարանում** տեղադրվել են ժամանակակից գտիչ սարքավորումներ:

«Չվարթնոց» օդանավակայանի բեռնահամալիրին կից կառուցվել է **սառնարանային համալիր**, որն ունի **2,200 քառակուսի մետր տարածք**, տեղադրված են սառնարաններ՝ շուրջ **115 տոննա** և սառցարաններ՝ շուրջ **25 տոննա** տարողությամբ, ինչպես նաև արագ սառեցման, խոնավեցման և այլ համակարգեր, որոնք Հայաստանի միրգն ու բանջարեղենը պատշաճ որակով միջազգային շուկա դուրս բերելու համար անհրաժեշտ պայմաններ են ապահովում:

2012 թվականից Արարատի մարզում գերմանական **«BHM GbR»** ընկերությունը կառուցելու է առևտրի ընդարձակ գոտի:

«Գեոպրոմայնինգ» ընկերությունը նախատեսում է Արարատում կառուցել ոսկու արդյունահանման նոր՝ **«Ալբիոն»** ֆաբրիկան, ուր կներդրվեն նոր տեխնոլոգիաներ: Նախատեսվում է ֆաբրիկան շահագործման հանձնել 2013 թվականին: Նոր տեխնոլոգիայի ներդրումը հնարավորություն կտա զգալի չափով մեծացնել մետաղի կորզումը **Սոթքի** հանքավայրի դժվար



«Արդյունավետությունը կկազմի մեկ միլիոն տոննա տարեկան: Սա ամենամաքուր տեխնոլոգիան է, որ այսօր գոյություն ունի աշխարհում»:

Ռոման Խուդոլի, «Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ

կորզվող սուլֆիդային հանքաքարից: Արտադրության արդիականացման ծրագրով նախատեսված միջոցառումները համապատասխանում են միջազգային բնապահպանական չափանիշներին: Գործարանը կկիրառի **«Ալբին»** գերժամանակակից տեխնոլոգիան: **«Ալբին»** տեխնոլոգիան, որը թույլ է տալիս հեշտությամբ վերամշակել ցանկացած ծանր հանքաքար, առաջին անգամ ներդրվել է Դոմինիկյան Հանրապետությունում, երկրորդը՝ Հայաստանում: 2011 թվականին ստացվել է շուրջ **40 հազար ունցիա** ոսկի, իսկ 2013 թվականին կստացվի **120 հազար**: Նոր տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ 2014 թվականին ոսկու արդյունահանումը կհասնի **150 հազար** ունցիայի: Գործարանում աշխատում է **735 մարդ**, նոր տեխնոլոգիաների ներդրումից հետո աշխատանքի կընդունվի ևս **130-ը**: Միջին աշխատավարձը գործարանում կազմում է **165 հազար դրամ**: Ներդրումների ընդհանուր գումարը «ԳեոՊրոմայնինգ» ընկերությունում հաջորդ երեք տարիներին կկազմի շուրջ **120 միլիոն ԱՄՆ դոլար**:

Մարզում զարգանում է նաև փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Դրանք հիմնականում սննդի, շինանյութերի, անտառային, քիմիական, մշակութային-ցաղային նշանակության և թեթև արդյունաբերության ապրանքների արտադրական ձեռնարկություններ են: Միայն 2010 թվականին **Արտաշատ**, **Մասիս**, **Արարատ** քաղաքներում, և գյուղական համայնքներում ստեղծվել են թվով 15 փոքր ու միջին նոր ձեռնարկություններ: Կառուցվել են ձկնաբուծարաններ, չրի

«Գեոպրոմայնինգ» ընկերության գործող հոսքագիծը շուտով կհամալրվի ոսկու կորզման գերարդիական եզակի սարքավորումով



չորացման փոքր և միջին արտադրամասեր: 2011 թվականին ստեղծվել են յոթ նոր փոքր ձեռնարկություններ և 42 առևտրային կազմակերպություններ:

2009-2011 թվականներին Արարատի մարզում հիմնվել են բանկային հինգ և վարկային մեկ կազմակերպություններ, այդ թվում՝ **«Չայ բիզնես բանկի»** Արարատի մասնաճյուղը, **«Առեքսիմբանկի»** (Գազպրոմբանկի խումբ) Արարատի մասնաճյուղը, **«Արարատ բանկի»** Արտաշատի և Մասիսի մասնաճյուղերը, **«Ֆինկա»** վարկային կազմակերպության Արտաշատի մասնաճյուղը: Մարզի տարածքում 2012 թվականի տարեսկզբին գործում էր **22 բանկումաստ**:



Հովտաշատի բնակիչ Մկրտիչ Անդրեասյանի յոթ անձից բաղկացած ընտանիքը հիմնականում ապրում է սեփական քրտինքով ստեղծած ջերմոցային տնտեսությունից ստացած եկամուտների հաշվին: Անդրեասյանները դեռևս 1990-ականներին որոշեցին տան հետևանմասում ունեցած 800 քառակուսի մետր հողատարածքի վրա պոմիդորի, վարունգ և պղպեղ աճեցնել: Հետագայում, ջերմոցային տնտեսությունը բարելավելու նպատակով, տարածքը հասցրեցին 3000 մետրի:


«Ստացված բերքը շուկա ենք հանում: Տարվա մեջ երկու անգամ բերք ենք ստանում ու կարողանում ենք իրացնել: Միջինը 60-ից 70 տոննա վարունգի ու պոմիդորի բերք ենք ստանում,-ասում է 43-ամյա Մկրտիչ Անդրեասյանը,- որը ընտանիքով աշխատում ենք: Տարվա մեջ մի պահ է լինում, որ աշխատուժը չի հերիքում: Ծանոթ, բարեկամ հարազատներին ենք ներգարվում աշխատանքի մեջ: Իրենց համար, ոնց որ, ժամանակավոր աշխատատեղ ենք ստեղծում: Հիմա թե աշխատես՝ կապրես: Ուզելով, լացելով գործի առաջ չի գնա: Եղած դժվարություններն էլ հաղթահարում ենք»:



Ենթակառուցվածքներ

Նախորդ տասնամյակում Արարատի մարզում շոշափելիորեն զարգացել են ենթակառուցվածքները: Արարատի մարզում Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2011 թվականին 2004 թվականի համեմատ կրկնապատկվել է, իսկ 1999 թվականի համեմատ՝ ավելացել է երեքուկես անգամ: Արմավիրից հետո Հայաստանի մարզերում գազի բաշխիչ գործող ամենաերկար ցանցն Արարատի մարզում է:

Գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունն Արարատի մարզում (կմ)




2011 թվականի տարեսկզբին Արարատի մարզում գազաֆիկացված էր երկու անգամ ավելի բնակարան և բնակելի տուն, քան 2005 թվականին և գրեթե եռապատիկ ավելի, քան 2001 թվականին:

Արարատի մարզում գազի բաշխիչ գործող ցանցի 80 տոկոսից ավելին անցնում է գյուղական համայնքներով:

2011 թվականի տարեսկզբին Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների ամենամեծ թվաքանակը Արարատի մարզում է:

Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների շուրջ մեկ հինգերորդն Արարատի մարզում է:

Գյուղական համայնքներում գազաֆիկացված բնակարանների քանակը ՀՀ մարզերում, 2010թ. (միավոր)




2010 թվականին Արարատի մարզն առաջինն էր հանրապետության գյուղական համայնքներին մատակարարված գազի ծավալներով:

2010 թվականին Արարատի մարզի գյուղական համայնքներում սպառողներին մատակարարված գազի ընդհանուր ծավալը 2001 թվականի համեմատ **քառապատկվել է**, իսկ 2005 թվականի համեմատ՝ **կրկնապատկվել**:

Հայաստանի Հանրապետությունում խմելու ջրի մատակարարման **ամենաամեն՝ երկարությամբ** փողոցային ցանցն Արարատի մարզում է: 2010 թվականին Արարատում էր գտնվում հանրապետության համայնքների խմելու ջրի մատակարարման փողոցային ցանցի ավելի քան 15 տոկոսը:

Հանրապետության մարզերում սպառողներին մատակարարված ջրի ամենամեծ ընդհանուր ծավալն Արարատում է:


Սպառողներին բաց թողնված ջրի ծավալները ՀՀ մարզերում, 2010թ. (մլն. խմ)



Հանրապետության մարզերում բաց թողնված ջրի յուրաքանչյուր վեցերորդ լիտրը մատակարարվել է Արարատի մարզի սպառողներին:

Ջրամատակարարման համակարգում կատարված ներդրումների արդյունքում նվազել են ջրի կորուստները. 2010 թվականին սպառողներին մատակարարված ջրի ծավալն Արարատի մարզում 2005 թվականի համեմատ **նվազել է շուրջ 80 տոկոսով**:

Ճանապարհաշինության բաժինն Արարատի մարզում 2007-2011թթ. իրականացված կապիտալ ծախսերի ընդհանուր ծավալում



Արարատի մարզում 2007-2011 թվականներին իրականացված կապիտալ ծրագրերի մեկ հինգերորդից ավելին ուղղվել է ճանապարհաշինությանը:

2007-2011 թվականներին Արարատի մարզի ավելի քան մեկուկես տասնյակ քաղաքային և գյուղական համայնքներում հիմնանորոգվել են հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներ: Մասնավորապես հիմնանորոգվել են **Ոսկետափ - Վեդի - Լանջառ, Բուրաստան - Արևշատ - Բարձրաշեն, Բերքանուշ - Դվին, Զաղցրաշեն - Ոստան, Վերին Արտաշատ - Հնաբերդ - Գետազատ, Այգեզարդ - Այգեպատ - Շահումյան, Բարձրաշեն-Նուբարաշեն, Բարձրաշեն - Լանջազատ - Աբովյան - Արևշատ - Նշավան - Բյուրավան - Բուրաստան, Ուրցածոր - Շաղափ - Լանջառ, Շահումյան - Զաղցրաշեն - Նարեկ, Կանաչուտ - Արևշատ** հանրապետական և տեղական նշանակության ավտոճանապարհները և դրանք հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին ու միջպետական մայրուղիներին կապող հատվածները: Հիմնանորոգվել են փողոցներ **Արտաշատ, Արարատ, Մասիս** և **Վեդի** քաղաքներում, հիմնանորոգվել է **Վաղարշապատ-Մասիս** հանրապետական նշանակության ավտոճանապարհի **Չորակի** կամուրջը:

2009 թվականին շահագործման է հանձնվել **Երևան-Արարատ** տակտային էլեկտրազնագեքը, որի շնորհիվ **Երևանից Արարատ** այժմ կարելի է հասնել մեկ ժամում: Երթևեկության արժեքն է ընդամենը 300 դրամ: Ուսանողները երթևեկում են **50% զեղչով**:

2010 թվականից Արարատի մարզի **Արտաշատ** քաղաքի բնակիչներն օգտվում են վերանորոգված երկաթուղային կայարանից: Արարատ-Երևան հատվածում կառուցվել է երկաթուղային **8 անցում**: Ամբողջությամբ վերանորոգվել են նաև երկաթուղային ենթակառուցվածքներն ու էլեկտրազնագեքը:

2007-2011 թվականներին Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով Արարատի մարզի **3 քաղաքային և 40 գյուղական համայնքներում** վերականգնվել ու բարելավվել են ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը, նորոգվել ու մաքրվել են կոլեկտորադրենաժային ցանցերը: Արարատում ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարե-

լավմանն ուղղվել է մարզում 2007-2011 թվականներին կատարված կապիտալ ներդրումների **ավելի քան մեկ հինգերորդը**:

Միայն 2010 թվականի ընթացքում **Արտաշատ** և **Մասիս** քաղաքներում կառուցվել և վերակառուցվել են **32 կիլոմետր** երկաթուղյամբ մայրուղային ջրատարեր և ջրամատակարարման ներքին ցանցեր: Արարատի մարզի **Այգեզարդ, Նորաշեն, Այգեստան, Զրահովիտ, Մասիս, Խաչպար, Դարակերտ, Մարմարաշեն, Արտաշատ** համայնքներում կառուցվել է ավելի քան տասնմեկ կիլոմետր ընդհանուր երկաթուղյամբ ներքին ցանց:

2011 թվականին Արարատի մարզի **Արգավանդ** և **Գեղանիստ** համայնքների ջրամատակարարման ինքնահոս ցանցի վերակառուցմամբ բարելավվել է համայնքների ջրամատակարարումը, հնարավոր է դարձել ակտիվ շահագործումից հանել **«Արարատյան-4»** մայրուղային ջրատարը և այն դարձնել պահուստային: Վերակառուցվել է **ինը հիդրավլիկ հանգույց**, կարգավորվել է ջրի ճնշումը, պարզեցվել ջրամատակարարման համակարգը, որի շնորհիվ մարզի համայնքներն Արարատյան դաշտի ջրի փոխարեն ստանում են Արգականի

Արտաշատի լիճը կրկին դառնում է քաղաքի այցեքարտը



աղբյուրի առավել բարձրորակ ջուրը: Շուրջ **մեկ բառորդով կրճատվել են** ջրի կորուստները:

2010 թվականին **Արտաշատում** ջրի որակի արտադրական հսկողությունը բարելավելու համար վերակառուցվել է լաբորատորիան: Այն այժմ համալրվում է նոր սարքավորումներով, ինչը հնարավորություն կտա կատարելու նաև մանրէաբանական փորձաքննություն:

2012 թվականին կատարվող ներդրումների արդյունքում կբարելավվի **Մասիս** քաղաքի և հարակից համայնքների բնակիչներին մատակարարվող ջրի և ջրամատակարարման որակը: Խմելու ջրի մատակարարման տևողությունը օրական 12 ժամից կհասնի 17 ժամի, կնվազեն ջրի աղտոտման ռիսկերը և կբարելավվի հաճախորդների սպասարկման որակը:

2007-2011 թվականներին Արարատի մարզի **15 քաղաքային և գյուղական համայնքներում** իրականացվել են գազաֆիկացման զգալի աշխատանքներ՝ շուրջ իննուկես միլիարդ դրամ ընդհանուր ծավալով: Գազաֆիկացվել են **Մխչյան, Խաչապար, Բարձրաշեն, Եղեգնավան, Ոսկետափ, Սիփանիկ, Սիս, Նոյակերտ, Նորամարզ** համայնքները, **Մասիս** գյուղական համայնքի նոր թաղամասը, բազմաբնակարան շենքեր և այլ շինություններ **Արտաշատ** քաղաքում, **Դարբնիկ** համայնքում:

2003 թվականին Արարատի մարզում գազաֆիկացված էր 52 համայնք, իսկ 2011 թվականին արդեն՝ **84**: Բնական գազից օգտվող ընտանիքների թիվը 2011 թվականին 2003 թվականի համեմատ **կրկնապատկվել է՝** հասնելով ավելի քան 37,570-ի:

2007-2011 թվականներին Արարատի մարզում հետևողականորեն բարելավվել են էլեկտրաէներգիայի փոխադրման և բաշխման ենթակառուցվածքները. կառուցվել է բարձր լարման **«Վանաշեն»** ենթակայանը սևող երկու կիլոմետր ընդհանուր երկարությամբ օդային մալուխային գիծ: Հիմնանորոգվել են բարձր լարման **«Մասիս»** և **«Հովտաշատ»** ենթակայանները, **«Մխչյան-2»** ենթակայանում կառուցվել է մարտկոցային կայան, **«Քաղցրաշեն»** ենթակայանում հուսալիության բարձրացման նպատակով տեղադրվել է բարձր լարման

երկրորդ տրանսֆորմատորը: Արարատի մարզի քսան համայնքում հիմնանորոգվել է ավելի քան **75 ենթակայան**:

2007-2011 թվականներին Արարատում կատարված ներդրումների արդյունքում մարզում այլևս **բոլոր բնակավայրերը** հեռախոսաֆիկացված են:

2009-2010 թվականներին Արարատի մարզում տեղադրվել են միջկայանային ԻԿՄ-30 նոր սարքավորումներ: Արարատի մարզի գյուղերում վերականգնվել, համարափոխվել և տեղադրվել է **2,042 թվային CDMA հեռախոս**: 2010 թվականին **«Արմենթել»** ընկերությունը տեղադրել է բջջային տասներեք բազային կայան՝ **Արտաշատ, Մասիս, Վեդի, Ավշար, Արգավանդ, Այնթապ, Բուրաստան, Միչյան, Սայաթ-Նովա, Գետափնյա, Փոքր Վեդի, Պարույր Սևակ, Զրաշեն** համայնքներում, **14 համայնքների** ավտոմատ հեռախոսակայաններում մոնտաժվել են մարտկոցային համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս հոսանքազրկման դեպքում ապահովել անխափան կապ: Արտաշատ քաղաքում վերակառուցվել է բաժանորդների սպասարկման սրահը:

2011 թվականին վերաբացվել են **«Հայփոստ» ՓԲԸ** Արարատի մարզի **Վեդի, Մասիս, Արարատ** և **Այնթափ** համայնքների հիմնանորոգված փոստային բաժանմունքները, որոնք ոչնչով չեն գիշում մայրաքաղաք Երևանում գործող փոստային բաժանմունքներին՝ ծառայությունների ու սպասարկման որակի առումով: Բաժանմունքներում բարձրացվել են սպասարկման չափորոշիչներն ու ներդրվել նոր ընթացակարգեր, փոխվել և նորացվել են ենթակառուցվածքները, տեղադրվել են արդի ծրագրերին համապատասխանող նոր համակարգիչներ, նորացվել է մալուխային համակարգը: Փոստային բաժանմունքները, ի լրումն ավանդական փոստային ծառայությունների, հաճախորդներին առաջարկում են ինտերնետային ծառայություններ, պատճենահանում, տպագրություն և ֆաքսիմիլային կապ:




«Հայփոստի» ժամանակակից մասնաճյուղ Մասիսում


Տունը

Արարատի մարզում տարեց-տարի մեծացել է բնակարանային ֆոնդը. 2011 թվականին բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսն Արարատի մարզում **մեկուկես անգամ ավելի էր**, քան 2003 թվականին: Լոռուց և Արմավիրից հետո՝ Արարատում է հանրապետության մարզերի բնակարանային ֆոնդի **ամենամեծ** ընդհանուր մակերեսը:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ՀՀ մարզերում (քմ)



Գյուղական բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը Արարատի մարզում (քմ)




Հայաստանի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդի **ամենամեծ** ընդհանուր մակերեսը, Արմավիրից հետո, Արարատի մարզում է: 2010 թվակա-

Նին Արարատի մարզի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2003 թվականի համեմատ **ավելի էր շուրջ 60 տոկոսով**:

2011 թվականին Արարատի մարզում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2000 թվականի համեմատ ավելի էր 2.3 անգամ:

2011 թվականին Արարատի մարզում մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2005 թվականի համեմատ **ավելի էր 40 տոկոսով**, իսկ Նույն ժամանակահատվածում մարզի գյուղական համայնքներում ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունն ավելացել է **մեկուկես անգամ**:

2011 թվականին Արարատի մարզի քաղաքային համայնքներում բնակելի տների (առանձնատների) քանակը 2005 թվականի համեմատ ավելի էր 15 տոկոսով: Նույն ժամանակահատվածում Արարատի մարզի քաղաքային համայնքներում առանձնատների ընդհանուր մակերեսն **ավելացել է 30 տոկոսով**:



2011 թվականին ճայաստանի ճանրապետության գյուղական համայնքներում ամենամեծ թվով բնակելի տներն Արարատի մարզում էին. ավելին, քան հանրապետության երեք մարզերում միասին:

2011 թվականին Արարատի մարզի գյուղական համայնքներում առանձնատների քանակը 2005 թվականի համեմատ **ավելի էր 30 տոկոսով**: Նույն ժամանակահատվածում Արարատի մարզի գյուղական համայնքներում առանձնատների ընդհանուր մակերեսն **ավելացել է 60 տոկոսով**:

Արարատի մարզում նշանակալիորեն ակտիվացել է անշարժ գույքի շուկան: Նախաճգնաժամային 2007 թվականին Արարատի մարզում իրականացվել է բնակելի տների առուվաճառքի **ավելի շատ գործարք**, քան հանրապետության որևէ այլ մարզում՝ մայրաքաղաք Երևանում առուվաճառքի գործարքների թվի կեսից ավելին: Թեպետ ճգնաժամի հետևանքով գործարքների թիվը մինչև 2009 թվականը նվազել է, այդուհանդերձ, 2010 թվականից սկսած, անշարժ գույքի շուկան մարզում **կրկին ակտիվանում է**: 2010 թվականին Արարատում է իրականացվել հանրապետության մարզերում բնակելի տների առուվաճառքի յուրաքանչյուր վեցերորդ գործարքը: 2010 թվականին Արարատի մարզում իրականացվել է բնակելի տների առուվաճառքի շուրջ **մեկուկես անգամ ավելի շատ** գործարք, քան 2003 թվականին:

2007-2011 թվականներին Արարատի մարզի **Արտաշատ, Մասիս, Արարատ** և **Վեդի** քաղաքներում հիմնանորոգվել են շուրջ քսան բազմաբնակարան շենքերի տանիքները:

2012 թվականին կմաքրվի Արտաշատի երբեմնի այցեքարտը՝ ճահճի վերածված **քաղաքային լիճը** և կբարեկարգվի հարակից տարածքը: Լճի վերակառուցմամբ կլուծվի քաղաքի համար կարևոր Էկոլոգիական խնդիրը: Այս նպատկով Հայաստանի Հանրապետության կառավարությունը Արարատի մարզին է հատկացրել հանրապետությունում բարեկարգմանն ուղղված կապիտալ միջոցների մեկ երրորդը:


Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում մաքրվել է հեղեղատար ջրանցքի հունն ու ամրացվել են պատերը, իսկ Ուրցաձոր համայնքի տարածքում մաքրվել և ամրացվել է **Վեդի** գետի **Եղեգնավան-Ուրցաձոր** հատվածը:

2007-2008 թվականներին բարեկարգվել է Արարատի քաղաքային այգին:

Աշխատանքը

Արարատի մարզում աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 2010 թվականին 2001 թվականի համեմատ **հնգապատիկ ավելի էր**, 2004 թվականի՝ **կրկնապատիկը**, իսկ 2007 թվականի համեմատ **ավելացել է շուրջ 40 տոկոսով**:

Աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը Արարատի մարզում (դրամ)




Նախորդ տասնամյակում Արարատի մարզում գործազրկության մակարդակն աստիճանաբար նվազել է: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Արարատի մարզում գործազրկության աճը, 2010 թվականից սկսած, **կրկին նվազում է**:

Աշխատող արարատցիների շուրջ երեք քառորդը 2010 թվականին զբաղված էր գյուղատնտեսության ճյուղում: 2010 թվականին աշխատող յուրաքանչյուր

Արմավիրից հետո Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսության մեջ զբաղվածների ամենամեծ թիվը Արարատի մարզում է՝ ավելի քան ութսունհինգ հազար մարդ՝ հանրապետությունում գյուղատնտեսության մեջ զբաղվածների ավելի քան 17 տոկոսը:

վեց արարատցիներից մեկը զբաղված էր ծառայությունների ոլորտում, յուրաքանչյուր տասից մեկը՝ արդյունաբերության կամ շինարարության ճյուղում:

Զբաղվածությունն Արարատի մարզում ըստ տնտեսության ոլորտների, 2010թ.



Նախորդ տասամյակում հետևողականորեն ավելացել է ոչ պետական հատվածում զբաղված արարատցիների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվում: 2010 թվականին Արարատի մարզում զբաղվածների 90 տոկոսն աշխատում էր ոչ պետական հատվածում:


Կրթությունը

Արարատի մարզում 2010 թվականին գործում էր 15 տոկոսով ավելի նախադպրոցական հաստատություն, քան 2001 թվականին: 2010 թվականին հանրապետության մարզերի նախադպրոցական հաստատությունների **15 տոկոսը գործում էր** Արարատում:

Արարատի մարզում է Հայաստանի գյուղական համայնքներում գործող նախադպրոցական հաստատությունների մեծ մասը. հանրապետության գյուղա-


Արարատի մարզում գործում են ավելի շատ նախադպրոցական հաստատություններ, քան հանրապետության որևէ մարզում:

Նախադպրոցական հաստատությունների քանակը ՀՀ մարզերում, 2010թ.



կան համայնքների նախադպրոցական հաստատությունների **մեկ հինգերորդն** Արարատի մարզում է: 2010 թվականին 2001 թվականի համեմատ Արարատի մարզի գյուղական համայնքներում գործում էին մեկ երրորդով ավելի նախադպրոցական հաստատություններ:

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների քանակը ՀՀ մարզերում, 2010թ.



Հանրապետության մարզերի նախադպրոցական հաստատությունների **մեծ մասն** Արարատի մարզում է: 2010 թվականին հանրապետությունում գործող նախադպրոցական հաստատություններում առկա յուրաքանչյուր վեց տեղից




մեկն Արարատի մարզում էր: Նախադպրոցական հաստատություններում տեղերի թիվը Արարատի մարզում տարեց-տարի ավելացել է. 2010 թվականին 2003 թվականի համեմատ մարզում տեղերի **թիվն ավելացել է շուրջ մեկ վեցերորդով:**

Կոտայքից հետո Արարատի մարզում են նախադպրոցական հաստատություններ հաճախող **ամենամեծ թիվով** երեխաները: 2010 թվականին Արարատի մարզում նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 2000 թվականի համեմատ **ավելացել է 60 տոկոսով:**

Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների **ամենամեծ թիվը** Արարատի մարզում է: Հանրապետության գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատություններ հաճախող **յուրաքանչյուր հինգերորդ** երեխան դաստիարակվում է արարատացու ընտանիքում:

Արարատի մարզում տարեց-տարի ավելացել է նաև նախադպրոցական հաստատությունների մանկավարժների թիվը. 2010 թվականին Արարատի նախադպրոցական հաստատություններում մանկավարժների թիվը 2002 թվականի համեմատ **ավելացել է մեկ հինգերորդով:**

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների հիվանդացության դեպքերի քանակը՝ հաճախող 100 երեխայի հաշվով, 2010թ.



Եթե 2003 թվականին Արարատի մարզում մեկ նախադպրոցական հաստատություն հաճախում էր 41 երեխա, ապա 2010 թվականին երեխաների թվաքանակը հասել է 71-ի՝ շուրջ երեք քառորդով ավելի:

2010 թվականին Արարատի մարզում նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերի քանակը հաճախող հարյուր երեխայի հաշվով 2002 թվականի համեմատ **Նվազել է շուրջ մեկ քառորդով:**

Եթե, 2002 թվականից սկսած, Հայաստանում հանրակրթության համակարգի օպտիմալացման բարեփոխումների շրջանակներում հանրապետությունում


Արգավանի նորակառույց մանկապարտեզը



հանրակրթական դպրոցների թիվը 2005 թվականին նվազել էր ավելի քան 80-ով, ապա Արարատի մարզում, 2000 թվականից սկսած, դպրոցների թիվը **չի պակասել**, ինչը հանրապետության մարզերի համար բացառիկ երևույթ է: 2005 թվականից սկսած՝ Արարատի մարզի հանրակրթական դպրոցներում ավելացել է մանկավարժների թիվը:

Եթե 2001/2002 ուսումնական տարում Արարատի մարզում գործում էր երաժշտական, արվեստի և գեղարվեստի 18 դպրոց, ապա 2010/2011 ուսում-

երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների աշակերտների թվաքանակը 33 մարզերում, 2011թ.



Հանրապետության մարզերում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում ուսուցման անվճար համակարգում 2010/2011 ուսումնական տարում ամենամեծ թվով աշակերտներ սովորում էին Արարատի մարզում:

նական տարում գործում է 22 դպրոց՝ մեկ հինգերորդով ավելի:

2010/2011 ուսումնական տարում Արարատի մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում ուսուցման անվճար համակարգում սովորում էր **երկու անգամ ավելի** աշակերտ, քան 2003/2004 ուսումնական տարում:

2008 թվականից Արարատի մարզում գործում է նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն՝ **120 ուսանողով**:

Եթե 2000 թվականին Արարատի մարզում գործում էր միջին մասնագիտա-

կան երկու ուսումնական հաստատություն, ապա 2010 թվականին դրանց թիվը **հասել է վեցի**:

Արարատում 2007-2011 թվականներին կատարված ներդրումների զգալի մասը՝ գրեթե մեկ երրորդն ուղղվել է մարզում կրթական հաստատությունների զարգացմանը:


Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում կատարված կապիտալ ներդրումների գրեթե մեկ երրորդը՝ շուրջ մեկուկես միլիարդ դրամ, ուղղվել է Արարատի մարզ:

2007-2011 թվականներին Արարատի մարզի **4 քաղաքային և 36 գյուղական** համայնքներում կառուցվել, հիմնանորոգվել և ջեռուցման համակարգերով են ապահովվել **հիսունհինգ ավելի** նախադպրոցական հաստատություններ:

Արարատի մարզի **երկուսուկես տասնյակ** մանկապարտեզներում գործում է ջեռուցման համակարգ:

Արարատի մարզի շուրջ 1,700 բնակիչ ունեցող **Արգավանդ** համայնքում, ուր ավելի քան տասնութ տարի մանկապարտեզը չէր գործել, 50 երեխաներ հաճախում են **«Անահիտ»** նորակառույց մանկապարտեզ, որն ունի կառուցապատ-

Նախադպրոցական հաստատություններին ուղղված կապիտալ ծախսերը ՀՀ մարզերում, 2007-2011թթ. (մլն. դրամ)





Վարդաշենի հիմնանորոգված դպրոցում, ձմեռ 2012

ված և կանաչապատված բակ, ցայտադյուրներ, լողավազան, կարուսելներ ու ճոճանակներ: 2012-2013 թվականներին Արարատի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում շարունակվելու են Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման և կառուցման աշխատանքները: Այսպես, 2012 թվականին կավարտվի **Այնթապ** համայնքի մանկապարտեզի կառուցումը:

Արարատի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում Նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացված մեծածավալ աշխատանքների շնորհիվ երեքից-վեց տարեկան արարատցի երեխաների ավելի քան **70 տոկոսը** և հինգից-վեց տարեկան շուրջ **630 երեխա** հաճախում է Նախադպրոցական հաստատություն:



Արարատի տարածաշրջանային պետական Նորաբաց քոլեջի համակարգչային դասարանը

2007-2011 թվականներին Արարատի մարզի **74 համայնքներում** իրականացվել են **ավելի քան 90** հանրակրթական հաստատությունների Նախագծման, հիմնանորոգման, կառուցման և վերակառուցման, ջեռուցման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ: Արարատի մարզի **Մասիս** քաղաքում, **Սիփանիկ** և **Վարդաշատ** համայնքներում կառուցվել են դպրոցներ:

2007-2011 թվականներին Հայաստանի մարզերում հանրակրթական դպրոցներում իրականացված կապիտալ ներդրումներն ամենամեծ թվով համայնքներում կատարվել են Արարատի մարզում. հանրապետության ոչ մի ուրիշ մարզում այնքան համայնքներում դպրոցաշինական ծրագրեր չեն իրականացվել, որքան Արարատում:

Հանրապետության մարզերի դպրոցներում իրականացվող կապիտալ աշխատանքներն ամենամեծ թվով կատարվել են Արարատի մարզի դպրոցներում: Շիրակի մարզից հետո, հանրակրթական դպրոցներում հանրային միջոցների հաշվին հանրապետության մարզերում կապիտալ ներդրումների ամենամեծ ծավալն Արարատում է:

Միայն 2011 թվականին Արարատի մարզի ավելի քան **40 դպրոցների** աշակերտներ ուսումնական տարին դիմավորել են **սորացված** դպրոցներում:

2007-2011 թվականներին կատարված աշխատանքների արդյունքում Արարատի մարզում ջեռուցման տեղային համակարգերով են օժտվել **60 դպրոցներ**՝ մարզի հանրակրթական դպրոցների շուրջ կեսը: Արարատի մարզում հանրակրթական դպրոցների շուրջ մեկ երրորդն ունի բարեկարգված մարզադահլիճ և խաղահրապարակ:

2011 թվականին **Արտաշատում** վերակառուցվել և բացվել է Արարատի տարածաշրջանային վերակառուցված **պետական քոլեջը**, ուր դասավանդվում է վեց մասնագիտություն՝ դեղագործություն, ատամնատեխնիկա, կոսմետոլոգիա, հաշվապահական հաշվառում, փոխադրումների կազմակերպում և կառավարում, ծրագրավորում: Քոլեջը համալրվել է հիշյալ մասնագիտությունների գծով ուսուցման համար նախատեսված ժամանակակից սարքավորումներով:

2010 թվականին Արարատի մարզի **Չանգակատուն, Լանջառ, Լուսաշող, Դաշտաբար և Շաղափ** գյուղերի դպրոցները ստացել են համակարգիչներ: Արարատի մարզի դպրոցների վերազինման արդյունքում 2011 թվականից մարզի բոլոր 112 դպրոցներն ապահովվել են ինտերնետ կապով: Արարատի մարզի



«Դպրոցի Նոր շենքն արդեն նայել ենք: Երեխաներին էլ էքսկուրսիա ենք տարել դպրոցով մեկ: Նրանց էլ շատ հաճելի էր այս Նոր շենքը, շատ տրամադրող»:

Սիրանուշ Էլազյան, Հնաբերդ գյուղի դպրոցի դասվար



«Երեխաները պետք է լավ դպրոց ունենան, որպեսզի կարողանան լավ սովորել, որ այս մեր պետությանը պիտանի մարդիկ դառնան: Մեզ շատ են պետք այս պետությունում, մեր փոքրիկ պետությունում այսպիսի երեխաներ... ու այսպիսի դպրոցներ»:

Գայանե Դավթյան, Հնաբերդի դպրոցի ուսուցչուհի

110 դպրոց ունի համակարգչային դասասենյակ: Արարատի մարզի հանրակրթական դպրոցներն ունեն շուրջ **1150 համակարգիչներ** և 1800 համակարգչային սարքավորումներ: Արարատի մարզի դպրոցներում մեկ համակարգիչ օգտվում է միջինում շուրջ 28 աշակերտ: Արարատի մարզի 112 հանրակրթական դպրոցներից 102-ն ապահովվել են ուսումնական զենքերով: Միջյան համայնքում ստեղծվել է ռազմագիտության շարային և սպորտային հրապարակ, հրաձգարան, որտեղ պատանիները տիրապետում են զենքի հետ վարվելու անվտանգության կանոններին:

Արարատի մարզի հանրակրթական դպրոցների շուրջ **1,800 ուսուցիչ** մասնակցել է որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների, իսկ շուրջ **2,000-ը** ստացել են համակարգչով աշխատելու պատշաճ գիտելիքներ և հմտություններ:

2010 թվականից **Արտաշատ քաղաքի թիվ 1** և **Նոր Խարբերդի թիվ 2** միջնակարգ դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն:


2010 թվականին օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցած Արարատի մարզի հանրակրթական դպրոցների շուրջ 70 աշակերտից տասնութն **արժանացել են դիպլոմների և գովասանագրերի**: Կենսաբանությունից առաջին կարգի դիպլոմի արժանացած **Արտաշատի** թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Գոռ Մարգարյանը Յարավային Կորեայում մասնակցել է միջազգային մրցույթի և արժանացել պատվոգրի:

Աշխարհի հիսուն երկրներում անցկացվող շուրջ վեց միլիոն դպրոցականների մասնակցությամբ **«Կենդուրու 2010»** միջազգային մաթեմատիկական մրցույթի հայաստանյան փուլում հաղթող է ճանաչվել Արարատի մարզի **Վանաշեն** գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտ **Աբրահամ Գրիգորյանը** և, որպես մրցանակ, ամառային արձակուրդներն անցկացրել Բուլղարիայում կազմակերպված միջազգային ճամբարում՝ եվրոպական երկրներից «Կենդուրուի» հաղթողների հետ միասին:

Առողջապահությունը

Արարատում 2001 թվականից տարեց-տարի ավելացել է մարզի բժիշկների թիվը: 2010 թվականին Արարատի մարզում տասը հազար բնակչի հաշվով բժիշկների թիվը **ավելացել է** մեկ քառորդով:

Բժիշկների թվաքանակը հազար բնակչի հաշվով Արարատի մարզում



Արարատի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ հաճախումների թիվը, 2001 թվականից սկսած, տարեց-տարի աճել է: 2010 թվականին Արարատի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումները 2001 թվականի համեմատ **կրկնակի ավելի էին**: 2007 թվականի համեմատ՝ 2010 թվականին Արարատի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ հաճախումներն **ավելացել են 20 տոկոսով**: Լոռուց և Արմավիրից հետո՝ 2010 թվականին հանրապետության մարզերի թվում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ ամենամեծ թվով հաճախումներն Արարատի մարզում են:

Արարատի մարզում ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ հաճախումները մեկ բնակչի հաշվով 2010 թվականին 2001 թվականի համեմատ կրկնապատկվել են:

2007-2011 թվականներին **շոշափելի կապիտալ ներդրումներ** են կատարվել Արարատի մարզի 37 քաղաքային և գյուղական համայնքների առողջապահական հաստատություններում: Հիմնանորոգվել և բարելավվել են ամբուլատոր-պոլիկլինական հիմնարկներ և առողջության պահպանման կենտրոններ ու բուժկետեր՝ **Մասիսի բժշկական կենտրոնը, Վեդու հիվանդանոցը, Արտաշատի հիվանդանոցը:**

Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ տարածաշրջանների համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում 2010 թվականին բացվել է **Արարատի հիմնանորոգված բժշկական կենտրոնը**, որը հագեցած է ժամանակակից անհրաժեշտ բուժսարքավորումներով և ունի վերապատրաստված բուժանձնակազմ: Հիվանդանոցում ստեղծվել է նաև հզոր ախտորոշիչ բազա:

2010 թվականին վերանորոգվել է **Մասիսի** բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքը և հինգ հիվանդասենյակներ՝ տարբեր բաժանմունքներում:

**Վեդիի հիմնանորոգված
ծննդատանը**





«Երկու աղջիկ ունեմ, մեծս 17 տարեկան է, երկրորդ աղջիկս՝ 15: Ես ու ամուսինս շատ էինք ցանկանում տղա ունենալ: Երկար տարիներ ապրել եմ Ռուսաստանում, բուժվել, բայց արդյունք չկար: Երեք տարի առաջ վերդարձանք հայրենիք: Արդեն հուլիսս կտրել էի, թե երբևէ ամուսնուս համար տղա զավակ կծնեմ, բայց հրաշք տեղի ունեցավ ու փետրվարի 23-ին տղաս ծնվեց: Կեսարյան հատում են արել, վիճակս լավ է, անչափ զոհ եմ բժիշկներից ու բուժանձնակազմի հոգատար վերաբերմունքից»:

Լուիզա Կիրակոսյան, 36 տարեկան

2011 թվականին ավարտվել է **Վեդիի** ծննդատան վերանորոգումը, գործում է ջեռուցման նոր՝ տեղային համակարգ և գեներատոր՝ արտակարգ պատահարների դեպքում անխափան էլեկտրաէներգիա ապահովելու նպատակով: Վերանորոգվել է վեց հիվանդասենյակ, պոլիկլինիկայի մանկական կոնսուլտացիայի մասնաշենքը, կազմակերպվել է Մայրության դպրոց: Ծննդատունը հագեցվել է նոր սարքավորումով. ծննդատանը, մասնավորապես, տրամադրվել է սպիրոմետր, իմունոֆերմենտային ապարատ, վերանորոգվել է ռենտգեն սարքավորումը: Հիվանդանոցը սպասարկում է Արարատի մարզի **13,000 կնոջ**: Ամեն տարի այստեղ ծնվում է շուրջ **800 երեխա**:

Արտաշատի բժշկական կենտրոնում վերանորոգվել են սանհանգույցները, քիթ-կոկորդ-ականջ բաժանմունքը, վերելակները: Կենտրոնն ապահովվել է էլեկտրաէներգիայի սնուցման երկրորդ աղբյուրով, ասֆալտապատվել է հիվանդանոց տանող ճանապարհը:

2007 թվականին Արարատի մարզում առողջության պահպանման առաջնային օղակի **50 հաստատություններին** տրամադրվել են բուժարքավորումներ և բժշկական գործիքներ: 2010 թվականին Արարատի մարզի **ինը բժշկական ամբուլատորիաների** տրամադրվել է ավտոմեքենա: Ներկայում Արարատի մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական բոլոր հիմնարկներն, առանց բացառության, ապահովված են առաջին օգնության միջոցներով:

Արարատի մարզում իրականացվել է «Լույս հայի աչքերին» ծրագիրը. հետազոտվել են **շուրջ 5.200**, վիրահատվել՝ **320 մարդ**, ակնոց է տրամադրվել ավելի քան **2,000 մարդու**:



Արարատի բժշկական կենտրոնը հագեցած է նորագույն սարքավորումներով

Վարակիչ և գանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և կարանտինային միջոցառումների կազմակերպման արդյունքում 2010 թվականին Արարատի մարզում զգալիորեն **սվազել է** տարափոխիկ հիվանդությունների դեպքերի քանակը, իսկ մալարիայով հիվանդացության դեպք չի արձանագրվել:

2010 թվականին Արարատի մարզում բժիշկների մասնագիտական գիտելիքները բարձրացնելու նպատակով վերապատրաստվել են **19 նեղ մասնագիտության բժիշկներ**, գյուղական բժշկական ամբուլատորիաների և չորս պոլիկլինիկաների **հինգ բժիշկներ** և **36 միջին բուժաշխատողներ** ստացել են ընտանեկան բժշկի որակավորում: 2012 թվականի տարեսկզբին Արարատի մարզի բնակիչների շուրջ 85 տոկոսն օգտվում է ընտանեկան բժշկի որակյալ ծառայություններից:

2010 թվականին կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ իրակա-

Արարատ քաղաքի բնակիչ 74-ամյա Վաչիկ Գրիգորյանի հիշողություններում խորհրդային ու հետխորհրդային տարիների քաղաքային այս հիվանդանոցը պահպանվել էր, որպես անհրապույր մի հաստատություն՝ լեցուն խավարասերներով, ուր հիվանդը կրկնակի էր հիվանդանում տիրող պայմաններից: Վաչիկ պապը՝ լինելով դիսպանսեր հիվանդ, կարելի է ասել այս բուժփիմսարկի «մշտական» այցելուներից է: Նա հիշում էր և՛ 1960-ականները, երբ շահագործման հանձնվեց հիվանդանոցը, և՛ 90-ականներին տիրող իրավիճակը, և՛, իհարկե, 2010 թվականը, երբ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ տարածաշրջանների համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում վերանորոգվեց «Արարատի հիվանդանոց» բժշկական կենտրոնը: Հիվանդանոցն, ի ուրախություն բուժանձնակազմի և հիվանդների՝ հազեցած է ժամանակակից բուժսարքավորումներով: Կենտրոնում ստեղծված է հզոր ախտորոշիչ բազա:

«Ես ամեն տարի մի կամ երկու շաբաթով գալիս եստեղ բուժվում եմ,-պատմում է Վաչիկ Գրիգորյանը,- սիրտս ա, բրոնխներս ա, այսինքն Էնկոսի հիվանդ եմ, որ ուզեմ չուզեմ պիտի հիվանդանոցում բուժում ստանամ: Հրաշալի պայմաններ են հիմա ստեղծվել Էս հիվանդանոցում վերանորոգումից հետո: Նախ պալատում երկու հոգուց ավել հիվանդ չի լինում, զուգարանը ներսն է, թե չէ Էս վախտերը մի հատ ընդհանուր զուգարան կար հիվանդների համար, Էս էլ միջանցքի ծայրում: Հիվանդները շատ ներս ու դուրս չեն անում էլ, հերթ չեն կանգնում: Մաքրությունից էլ շատ գոհ եմ: Պահ կա, որ ես եմ նեղվում, թե էսքան ինչ են սրանք թուպեն մեկ ավլում ու սրբում: Որ հիշում եմ Էս ժամանակները... տարականները մարդ էին ուտում: Հիմի անգամ մտածում եմ, որ Երևանում էլ մեր հիվանդանոցի պես հիվանդանոց չկա»:



Նացված կանխարգելիչ պատվաստումներում մինչև երկու տարեկան երեխաների ընդգրկվածությունն Արարատի մարզում կազմել է ավելի քան **95 տոկոս**՝ ավելի բարձր, քան միջին ընդգրկվածությունը Հայաստանում:

Արարատի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում իրականացվող սկրինինգային ծրագրերում՝ զարկերակային ճնշման չափում, կրծքագեղձի, արգանդի վզիկի, շակասակագեղձի հետազոտություններ, ընդգրկված է բնակչության **շուրջ 85 տոկոսը**:

2010 թվականին Արարատի մարզի գյուղական համայնքների բնակչության շուրջ **30 տոկոսն օգտվել է** շրջիկ բժշկական խմբերի ծառայություններից, ընդ որում, մատուցված ծառայությունները բավարար են գնահատել գրեթե բոլոր շահառուները:

Մշակույթն ու սպորտը

Արարատի մարզի **40 քաղաքային և գյուղական համայնքներում** 2007-2011 թվականներին իրականացվել են մշակութային հաստատությունների հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքներ:

Հիմնանորոգվել են **Ուրցալանջ, Վարդաշեն, Արաքսավան, Դիտակ, Վարդաշատ, Աբովյան, Նոր Ուղի, Մրգանուշ, Դվին, Հովտաշատ, Հովտաշեն, Սիսավան, Շաղափ, Նորաշեն, Արևաբույր, Լուսաշող, Արևաշատի, Գոռավան, Արմաշ, Վերին Դվին, Բերդիկ, Բերքանուշ, Այգեստան, Նոյակերտ, Վանաշեն, Քաղցրաշեն, Բարձրաշեն, Մասիս, Չանգակատուն, Ոսկետափ, Արարատ, Վերին Արտաշատ, Նոր Կյանք, Նարեկ, Վեդի** համայնքների մշակույթի տները, **Ուրցածորի** համայնքային կենտրոնը, **Արարատի** մարզային գրադարանը:

Ջեռուցման տեղային համակարգեր են կառուցվել **Մխչյան** և **Նոր Կյանք** համայնքների մշակույթի տներում, **Արտաշատ** քաղաքի երաժշտական դպրոցում

Հայաստանի չորրորդ մայրաքաղաքը
2200 տարեկան է



և թատրոնում: Հիմնանորոգվել է **Գևորգ Մարգարյանի** ամրոցը՝ **Ուրցածոր** գյուղում:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են **Մասիս** քաղաքի մարզադպրոցն ու **Վեդիի** քաղաքապետարանի մարզադահլիճը, **Ուրցածոր** համայնքում կառուցվել է մարզադաշտ, **Սուրենավան** գյուղում՝ խաղահրապարակ:

2007-2011 թվականներին Արարատի մարզում ակտիվացել է մշակութային-մարզական կյանքը: 2011 թվականին Արարատի մարզի արվեստի և երաժշտական **15 դպրոցների ուսուցիչների և տնօրենների** մասնակցությամբ ստեղծվել է ժողովրդական գործիքների **«Արարատ»** նվագախումբը: 2011 թվականին մեծ շուքով նշվել է հայոց փառավոր մայրաքաղաքներից մեկի՝ **Արտաշատի** հիմնադրման քսաներկուդարյա տարելիցը:

2010 թվականին Հայաստանի Ազգային գրադարանը շրջիկ գրադարանով՝ **քիբլիոթոսով** այցելել է Արարատի մարզի Մասիսի քաղաքային գրադարան՝ համալրելով նրա ֆոնդը **120 միավոր** գեղարվեստական, պատմական գրքերով և հայերեն, ռուսերեն, անգլերեն պարբերականներով: Սկսած 2006 թվականից՝ ամեն տարի Մասիսի քաղաքային գրադարանը քաղաքապետարանի կողմից համալրվում է նոր գրականությամբ: Ի տարբերություն մյուս մարզերի գրադարանների, այստեղ ստանում են վեց անուն թերթ:

Արարատի մարզի շախմատի հավաքականը Գյուղական պատանեկան հանրապետական ութերորդ խաղերում ստացավ առաջին մրցանակ, մարզի հավաքականը տասնմեկ մարզաձևերում ընդհանուր թիմային հաշվարկով, լավագույնն էր հանրապետությունում:

2007-2011 թվականներին Եվրոպայի և աշխարհի առաջնություններում 14 արարատցիներ արժանացել են բարձրագույն մրցանակների:

2011 թվականին Բուլղարիայում չեմպիոնի կոչում է նվաճել և շախմատի Եվրոպայի պատանիների և աղջիկների առաջնության ոսկե մեդալակիր դարձել Արարատի մարզի Բյուրավան գյուղի բնակիչ 12-ամյա Հայկ Մարտիրոսյանը:



11-ամյա Հայկ Մարտիրոսյանն արարացիների պարծանքն է: Տղան ծնվել և մեծացել է Արարատի մարզի Բյուրավան գյուղում: Հայրը պատմում է, որ Հայկը շախմատային ընդունակություններ դրսևորել է շատ փոքր տարիքում: Սերը իմաստուն խաղի նկատմամբ պատահական բնույթ չէր կրում: Հայրը՝ Միքայել Մարտիրոսյանը շախմատի դասատու է, ավարտել է Ֆիզկուլտուրայի ինստիտուտի շախմատի բաժինը: Տանը մշտապես երեխաների հետ շախմատ է պարապել, և ահա արդյունքը, կարելի է ասել՝ մեծագույն: Վճռորոշ էր նաև Միքայելի՝ Հայաստանի շախմատի ակադեմիայի Արտաշատի մասնաճյուղում աշխատանքի անցնելու փաստը: 6,5-ամյա Հայկն էլ դառնում է շախմատի դպրոցի սան ու սկսում լրջորեն զբաղվել սիրած սպորտաձևով:

Չափազանց ուշիմ ու աշխատասեր մանչուկը շատ կարճ ժամանակահատվածում, մասնակցելով տարբեր շախմատային մրցաշարերի, գրավում է մրցանակային տեղեր: Տասը տարեկանում գրավում է չորրորդ տեղը Հայաստանում անցկացված շախմատի առաջնությունում: Բաթումիում անցկացված Եվրոպայի պատանիների շախմատի առաջնությունում Հայկը գրավում է 6-րդ տեղը՝ իրավունք ստանալով հաջորդ տարի ևս մասնակցել առաջնությանը:


Ջերմուկում անցկացված մինչև տասը տարեկանների շախմատի առաջնությունում տղայի ունեցած մասնակցությունը հաղթական էր: Հայկը հռչակվում է առաջնության հաղթող: «2011 թվականին Հայաստանում անցկացված բոլոր առաջնություններում Հայկս հաղթող է եղել իր տարեկիցների շրջանում,– պատմում է հայրը,– անցած տարի սեպտեմբերին էլ, մասնակցելով Բուլղարիայում անցկացվող պատանիների Եվրոպայի առաջնությանը մինչև 12 տարեկանների մեջ, տղաս դարձավ չեմպիոն: Նրան շնորհվեց ՖԻԴԵ վարպետի կոչում: Այս տարի Հայկը ՖԻԴԵ-ի կողմից իրավունք ստացավ մասնակցելու Եվրոպայի պատանիների առաջնությանը: Իրանի հանրապետության Ռաշտ քաղաքում փետրվարի 29-ից մարտի 8-ը Հայկը մասնակցելու է միջազգային մրցաշարին: Հույս ունեմ, որ հաղթանակով կվերադառնա»:

Հայկի կուռքերը շախմատային աշխարհում Լևոն Արոնյանն ու Վլադիմիր Հակոբյանն են: Տղան ինքն էլ պատրաստվում է գնալ նրանց հետքերով:

Սոցիալական վիճակը

Արարատի մարզում 2002 թվականից կենսամակարդակի բարձրացմանը համընթաց, տարեց-տարի հետևողականորեն **նվազել է** նպաստառու ընտանիքների թիվը: Թեպետ 2008 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով կարիքավորների, ուստիև նպաստառու ընտանիքների թիվը մարզում աճել է, այդուհանդերձ, 2009 թվականից սկսած՝ մարզում կարիքավոր ընտանիքների թիվը **նվազել է**: 2010 թվականին Արարատի մարզում ավելի քիչ ընտանիքներ են նպաստ ստացել, քան 2000 թվականից ի վեր:

2002 թվականի համեմատ՝ Արարատի մարզում նպաստառու ընտանիքների թիվը նվազել է **կիսով չափ**:



Աղքատության մակարդակն Արարատի մարզում տարեց-տարի նվազել է ընդհուպ մինչև 2007 թվականը: Համաշխարհային սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանքով աղքատության մակարդակը, ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էր Արարատի մարզում կտրուկ բարձրացավ. արդյունքում 2009 թվականին Արարատում խիստ կարիքավոր ընտանիքների տեսակարար կշիռը մարզի տնային տնտեսությունների ընդհանուր թվում հասավ 2007 թվականի մակարդակին: Այդուհանդերձ, 2010 թվականից սկսած շատ աղքատ ընտանիքների թիվը մարզում **սկսել է կրճատվել**:

2010 թվականին Արարատի մարզում բնակվող զոհված ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմանդամ, սակավ ապահովված ընտանիքների **250 երեխաներ** ամռան ընթացքում անվճար հանգստացել են Հանքավանի «Հեթաթների կիրճ» ճամբարում:

2010 թվականին Արարատի մարզի համայնքներում իրականացվել են վարձատրվող հասարակական աշխատանքներ՝ ներգրավելով ավելի քան **190 մարդու**: 2010 թվականի ընթացքում աշխատանքի են տեղավորվել ավելի քան **80 գործազուրկներ**:

2007-2010 թվականներին Արարատի մարզի **Արտաշատ, Արարատ** և **Մասիս** քաղաքներում բարեգործական ճաշարաններից ամեն տարի օգտվել է մարզի շուրջ 170 կարիքավոր բնակիչ: Ներկայում բարեգործական ճաշարան է գործում Մասիս քաղաքում, որը օրական մեկ անգամ տաք սնունդով ապահովում է **72** կարիքավոր բնակիչ:

2007-2011 թվականներին՝ յուրաքանչյուր տարի մարզի քաղաքային համայնքներում տնային պայմաններում սպասարկվել է շուրջ **270 տարեց**:

Արարատի մարզում 2010 թվականին վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ են տրամադրվել **120 հաշմանդամների**:

2011 թվականին մարզի սոցիալական ծառայությունների տարածքային չորս գործակալությունները ստացել են **ինտերնետ կապից** օգտվելու հնարավորություն:

Արարատի մարզի մի շարք քաղաքային համայնքներում սոցիալական նշանակություն ունեցող առանձին ենթակառուցվածքներ **սարքավորվել են** թեթևհարթակներով:

Իսիտ հատկանշական է, որ Արարատի բնակչության 85 տոկոսն իր ապագան կապում է մարզի հետ և չի պատրաստվում փոխել բնակավայրը: Սա **ամենաբարձր** ցուցանիշն է հանրապետությունում:

Այսպես է ապրում արարատցին իր հողի վրա, Արարատի փեշերին ու ողջ երկրի աչքի առաջ: Ապրում է առօրյա մարդկային ուրախություններով ու հոգսերով, ընտանիք կազմում ու երեխա ունենում, տուն կառուցում ու մեծացնում զավակին, մշակում հողն ու նրա բարիքները, կառուցում կամուրջ ու ճանապարհ, լուսավորում իր շեներն ու ջերմացնում սիրելիների սրտերը, մրցում ու հրճվում հայրենակցի հաղթանակներով, փակ պահում սահմանը անհաշտ հարևանից, ու սիրո ճանապարհը պահում բաց:

Ապրում է արարատցին, ու նրա կողքին, հաճախ մի բահ հեռավորության վրա, ապրում է մարդկային քաղաքակրթության յոթանասուն դար:

Ապրում է արարատցին ստորոտից-գագաթ՝ աշխարհում ամենաբարձր լեռան գոգին ու արարում ամենաբերրի հողի վրա:

Ապրում է արարատցին հողի վրա, ուր մարդ արարածներից միակը լսեց ու հավատաց արարչին ու փրկեց մարդկությունը կործանումից: Հավատի զորությամբ մարդն այստեղ՝ Արարատի հողի վրա փոխեց մարդկության ճակատագիրն ու փոխեց մարդու հանդեպ Արարչի հայացքն անգամ:

Իր հավատով մարդն օրհնություն կորզեց ու արարատյան հողում աճելու ու բազմանալու պատգամ: Եվ հազարամյակներ անց, Նահապետի արարատյան ժառանգներից ամենահանճարեղը, արարչի պատգամի իրավունքով շանթեր բեկանեց և կոչեց՝ լինել ու շատանալ: Շատանալ շնչով ու շատացնել հավատն իր ուժերի հանդեպ, հավատալ սեփական բազկին ու մտքին, բայց ամենից առաջ ու ամենից առավել հավատալ մյուսին՝ մերձավորին, հարևանին, հայրենակցին:

Արարատցին եղել ու մնում է հայոց հավատի շտեմարանը. այստեղ հայի հավատն այնքան շատ է ու այնքան ամուր, որ դարերով սնել ու սնելու է մի ողջ ազգի:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Արարատի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործըկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Արարատի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը արարատցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012